Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

Շ.Մ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ, Ա.Գ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/ծագման պատճառները, ռազմավարությունը, կարգավորման ուղիները/

Ստեփանակերտ 2011

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Շ.Մ. Աբրահամյան

Ա.Գ. Աբրահամյան

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/ծագման պատճառները, ռազմավարությունը, կարգավորման ուղիները/

Ստեփանակերտ 2011

ՀՏԴ 32.001: 391/395 : 325
ԳՄԴ 66 + 63.5 + 66.5
Ա 161

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի երաշխավորությամբ

Խմբագիր՝ պատմական գիտությունների թեկնածու,
պրոֆեսոր Վ.Ռ. Բալայան

Գրախոսներ՝ պատմական գիտությունների թեկնածու,՝
պրոֆեսոր Վ.Ռ. Բալայան
ԱրՊՀ-ի փիլիսոփայության և քաղաքագիտության
ամբիոնի դասախոս Դ.Պ. Կարաբեկյան

Աբրահամյան Շահեն Միքայելի
Ա 161 ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ /ծագման պատճառները, ռազմավարությունը, կարգավորման . ուղիները/ Շ.Աբրահամյան, Ա. Աբրահամյան; ԱրՊՀ; Խմբ.՝ Վ.Ռ.Բալայան. - Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2011. - 60 էջ:

Ժամանակակից քաղաքական գիտության հայեցակետերի տեսանկյունով և էթնոքաղաքական կոնֆլիկտների դրսևորման օրինակների օգտագործման հիման վրա խնդիր է դրվել ընթերցողին ներկայացնել էթնոքաղաքական կոնֆլիկտների ծագման հիմնապատճառները, հակամարտության կողմերի փոխներգործությունը, կոնֆլիկտների կառավարման ու կարգավորման մեխանիզմները: Գրքույկում որոշակի տեղ է հատկացվել նաև դարաբաղյան հակամարտության առանձնահատկությունների, կայացման փուլերի, հիմնապատճարների լուսաբանմանը: Գրքույկը ներկայացված է քաղաքականությամբ հետաքրքրվող ընթերցողներին:

ՀՏԴ 32.001: 391/395 : 325
ԳՄԴ 66 + 63.5 + 66.5

ISBN 978-99941-964-8-7

© Աբրահամյան Շահեն, 2011

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 4
Քաղաքական հակամարտությունների
առաջացման պայմաններն ու գործոնները 7
Էթնոքաղաքական հակամարտությունները
սոցիալական հակամարտությունների համակարգում 15
Էթնոքաղաքական հակամարտությունների
սուբյեկտները և հիմնախնդիրները 28
Էթնոքաղաքական հակամարտությունների
ռազմավարությունը, կայացման
փուլերը և կարգավորման եղանակները 37
Էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ
կարգավորման ռազմավարությունը 47
Վերջաբան 56
Օգտագործված գրականություն 58

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Անցած 20-րդ դարը իրավամբ կարելի է անվանել հակամարտությունների դար, թեկուզ այն պատճառով, որ այն մարդկության պատմության մեջ մտավ երկու աշխարհամարտերով, սառը պատերազմով և ԽՍՀՄ-ի քայքայումով: Աշխարհամարտերը հակամարտությունների մեծածավալ դրսևորման երևույթներ էին, որոնց զոհ դարձան միլիոնավոր մարդիկ: Հասարակագիտական ուսումնասիրություններում արտահայտված տվյալների համաձայն երկրորդ աշխարհամարտի ժամանակ հակամարտության երկու կողմերի հետ կապված էին 72 պետություններ, որոնք այսպես թե այնպես մասնակցում էին հակամարտության գործընթացին: 21-րդ դարում ապրող անհատը նույնպես անկախ իր կամքից, ապրում է հակամարտությունների աշխարհում: Հակամարտությունները բազմապիսի ու բազմաբնույթ են: Ուստի յուրաքանչյուր անհատ կամա, թե ակամա ներգրավվում է քաղաքական գործընթացների մեջ, և նրա համար կենսական խնդիր է դառնում ճիշտ կողմնորոշվելը մանավանդ սոցիալական ու ազգային շահերը ճիշտ ըմբռնելու ու պաշտպանելու հարցում:

Քաղաքական հակամարտությունների բաղկացուցիչ մասն է հանդիսանում էթնոքաղաքական ներհակությունը, որը դրսևորվում է հատկապես դաշնային պետություններում և այնպիսի տարածաշրջաններում, որտեղ հարևան երկրներն ունեն պատմական բնույթի, սահմանների, հավատի հետ առնչվող վեճեր: Էթնոքաղաքական հակամարտությունների գործընթացում առավել դժվարին կացության մեջ են հայտնվում համեմատաբար փոքր ազգերը, ազգությունները ու էթնիկական խմբերը, որոնք պայքարում են ինքնորոշման, ազգային լեզվի ու մշակույթի, սովորությունների ու ավանդությունների պահպանման համար: Էթնոքաղաքական հակամարտությունները ու տարբեր տարածաշրջաններում դրանց ծագման պատճառները բազմաբնույթ ու բազմաձև են և պայմանավորվում են էթնիկական խմբերի, ազգերի ու ազգությունների պատմականորեն ձևավոնված հարաբերություններով:

Էթնոքաղաքական հակամարտությունները մասսայական բնույթ ստացան հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսին և դարձան

այնպիսի վտանգ, որը կարող է վերածվել լայնածավալ աղետների: Ուստի պատահական չէ, որ այն դարձավ ոչ միայն ՄԱԿ-ի ու միջազգային այլ կառույցների գործունեության էական հիմնահարցերից մեկը, այլև համաշխարհային հասարակության մտահոգության լուրջ խնդիրը: Երկրների համագործակցության որոշիչ գործոններից մեկը արդի աշխարհում էթնիկական հակամարտությունների կառավարումն ու կարգավորումն է: 20-րդ դարի 80-90-ական թվականներին էթնոքաղաքական հակամարտությունները սրվեցին հատկապես ԽՍՀՄ-ի տարածքում: Իսկ ԽՍՀՄ-ի քայքայումից հետո այդ տիպի հակամարտությունների անվերահսկելի լինելը հասցրեց ուժային այնպիսի ընդհարումների, որոնց արդյունքում զոհվեցին հազարավոր մարդիկ: Առավել ողբերգական հետևանքներ ունեցան ռուս-չեչենական, ադրբեջանա-ղարաբաղյան, վրաց-աբխազական և վրաց-հարավօսեթական հակամարտությունները: Այդ հակամարտությունները չի կարելի դիտարկել իբրև խորհրդային կարգերի քայքայման հետևանք; Դրանք ձևավորվել են ԽՍՀՄ-ի գոյության տասնյակ տարիների ընթացքում և անխզելիորեն կապված են Խորհրդային Միության կոմկուսի ազգային քաղաքականության հետ: Նշանավոր ռուս քաղաքագետ-տեսաբաններ Ա. Յա. Անցուպովը և Ա. Ի. Շիպիլովը նախկին ԽՍՀՄ-ի տարածքում ձևավորված էթնոքաղաքական հակամարտությունների պատճառական գործոնները բացատրում են կոմունիստական կուսակցության ազգային քաղաքականության հետևյալ չորս հիմնական սկզբունքներով՝ դրանք են.

1. ազգային քաղաքականության մեջ շեշտը դրվել է ազգերի ու ժողովուրդների ավտոմատիկ մերձեցման վրա, անտեսելով ազգերի ներսում կատարվող զարգացման բնական գործընթացները ,
2. հաճախակի հատվել են միութենական և ինքնավար պետական կազմավորումների սահմանային տարածքները, առանց հաշվի առնելու տվյալ տարածքում ապրող էթնոսի կարծիքը
3. կենտրոնական իշխանությունները լուրջ նշանակություն չեն տվել միութենական և ինքնավար կազմավորումներում ձևավորվող և զարգացող սուվերենության ձգձգման գործընթացին ,

4. ԽՄԿԿ-ի ընտրած ռուսիֆիկացման ծրագիրը աստիճանաբար նպաստել է այդ քաղաքականության և ազգային ինքնագիտակցության միջև ծագած հակամարտության սուրաջացմանը:[1]

Արդի աշխարհում էթնոքաղաքական հակամարտությունները ծագում են և՛ տնտեսապես զարգացած, և՛ նոր զարգացող երկրներում, որոնք հաճախ ժողովուրդների թշնամանքի, բազմաթիվ մարդկային զոհերի պատճառ են դառնում: Ուստի կարևորվում է այնպիսի հարցերի մեկնաբանումն ու բացահայտումը, ինչպիսիք են՝ կերպարանափոխվող աշխարհում այդ հակամարտությունների ակտիվացման պատճառները, ինչպիսի՞ հարաբերություններ ունեն հակամարտությունները գլոբալացման գործընթացի հետ, ինչ՞ հնարավորություններ կարող են լինել էթնոքաղաքական հակամարտությունները կանխելու կամ կարգավորելու համար և այլն: Երևույթի գլոբալ բնույթի հարկադիր պահանջով ներկայումս ձևավորվել է էթնոսոցիոլոգիայի նոր բաղադրամաս, որը հավակնում է դառնալ հասարակական մասնավոր գիտությունների համակարգի լիարժեք անդամ՝ **"էթնոքաղաքական կոնֆլիկտոլոգիա"** անվանումով:

Ներկա աշխատանքում դիտարկելով քաղաքագիտական ուսումնասիրություններում և ձեռնարկներում կատարված եզրահանգումներն ու տեսակետները և օգտագործելով դարաբաղ-ադրբեջանական հակամարտության գործընթացի փաստացի տվյալները, անձնական տեսանկյունով խնդիր է դրվում մեկնաբանել էթնոքաղաքական հակամարտությունների ծագման պատճառական կապերի, հիմնախնդիրների ու կարգավորման եղանակների մի քանի հիմնահարցեր:

Գրքույկը կարծում ենք օգտակար կլինի բուհերի հումանիտար բաժինների ուսանողների, մտավորականների և քաղաքականությամբ, հատկապես ազգային քաղաքականությամբ հետաքրքրվողների համար: Հեղինակների կողմից երախտագիտությամբ կընդունվեն նկատված բացերի վերաբերյալ կատարված դիտողությունները:

---

[1]Տես՝ А. Я. Анцупов, А. И. Шипилов, Конфликтология, М., 2009г. стр. 83.

1. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՅԱՑՄԱՆ ՆԱԽԱՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

XXI դարասկզբի կերպարանափոխվող աշխարհում նկատելի փոփոխություններ են կատարվում նաև յուրաքանչյուր անհատի, սոցիալական խմբի, էթնոսի հայացքներում, հիմնախնդիրների մոտեցումներում և ըմբռնումներում: Սոցիալիզմի համակարգի քայքայումը, եվրոպական պետությունների կազմում կատարված վերակառուցումները, հատկապես հարավսլավական դաշնության քայքայումը հրատապ հիմնահարցեր առաջադրեցին քաղաքական հակամարտությունների ակտիվացման պատճառական կապերը նոր տեսանկյունով մեկնաբանելու գործում: XX դարի վերջերից սկսած քաղաքական հակամարտությունների լայնամասշտաբ տարածման մեջ մեծ դեր են զբաղեցնում էթնոքաղաքական հակամարտությունները: Այդ տիպի հակամարտությունների ծագման, զարգացման և մարման գործընթացի ուսումնասիրությունը ոչ միայն լրացնում և ընդլայնում է էթնոսոցիոլոգիայի առարկայի շրջանակներն ու կատեգորիական համակարգը, այլև նպաստում է ինքնուրույն, մասնավոր գիտական ճյուղի կայացմանն ու ինքնահաստատմանը: Էթնոսոցիոլոգիան ընդհանուր սոցիոլոգիայի ենթակառույցներից մեկն է, որը կոչված է ուսումնասիրել էթնոսի ներքին կյանքի հատուկ գործընթացները, ժամանակակից ազգի, ազգությունների, էթնիկական փոքր խմբերի կազմավորման օրինաչափությունները և աշխարհում կառուցվող ազգամիջյան հարաբերություններն ու հասարակության էթնիկական կառուցվածքի ապագային վերաբերող կանխատեսումները:

Ազգը սոցիալ-պատմական զարգացման սուբյեկտներից մեկն է: Իբրև հասարակության սոցիալական համակարգի յուրահատուկ բաղադրամաս, ազգը բնորոշվում է ներհատուկ այնպիսի հատկանիշներով, ինչպիսիք են լեզուն, ազգային մշակույթը, ավանդույթը, ազգային ինքնագիտակցությունն ու հոգեբանությունը: XX դարի 70-ական թվականներին ԽՍՀՄ-ում ընդունվեց այսպես կոչված Զարգացած սոցիալիստական հասարակության կառուցման սահմանադրությունը, որտեղ ընդգծված էր, որ խորհրդային ազգերի ու ժողովրդների զարգացման գերակայող տենդենցը ազգերի հետագա մերձեցումն է և «խորհրդային ժողովուրդ» մարդկանց

պատմական նոր տիպի հանրույթի կայացումը: Դա փաստորեն նշանակում էր, որ ազգային հարաբերությունների և ազգային զարգացման տեսական սկզբունքային ընդհանրացումը կատարվում է երկրի ղեկավար մարմնի, այսինքն կոմունիստական կուսակցության կողմից, իսկ հասարակագետների խնդիրն էր համարվում առօրյա պրակտիկ խնդիրների մեկնաբանումն ու դրանց լուծման համար եղանակների առաջադրումը: Նորանկախ ազգային հանրապետությունների կազմավորումից հետո միայն իրական պայմաններ ստեղծվեցին ազգերի ձևավորման ու զարգացման մասին գիտությունների ամբողջական համակարգի ձևավորման համար: Այդ համակարգի ենթաբաղադրիչներից են էթնոդեմոգրաֆիան, էթնոհոգեբանությունը, էթնոքաղաքագիտությունը, էթնոհնագիտությունը, էթնոլինգվիստական և այլն: Համեմատաբար ավելի նոր կազմավորված տեսություններից է էթնոքաղաքական կոնֆլիկտոլոգիան: Էթնոսոցիոլոգիայի այս նոր ճյուղի խնդիրն է հանդիսանում ճիշտ կողմնորոշվելու մարդկանց էթնոքաղաքական կոնֆլիկտային իրավիճակում և կառուցել գիտելիքների ամբողջական համակարգ՝ հակամարտությունները կառավարելու և կարգավորելու համար: Ներկա գրքույկի ներածականում մեր կողմից առաջադրվող հիմնախնդրի մեկնաբանման համար անհրաժեշտ ենք համարում հակիրճ ներկայացնել այն հիմնական նախապայմաններն ու գործոնները, որոնք նպաստում են քաղաքական հակամարտությունների առաջացմանը:

Մարդկային անհատականությունը ձևավորվում ու կայանում է միայն սոցիալական միջավայրում և հանդիսանում է սոցիալական որոշակի խմբի մասնիկը: Եթե զարգացման գործընթացին ներհատուկ է հակասականության օբյեկտիվ բնույթը, ապա կարելի է ասել, որ օրինաչափ է սոցիալական լարվածությունը հասարակության կյանքում: Սոցիալական լարվածության պատճառները կարող են լինել բազմազան: Այդ պատճառները ձևավորվում են տնտեսական, ընտանեական, բնական ռեսուրսների օգտագործման և այլ ասպարեզներում: Հետևաբար, սոցիալական լարվածությունը բոլոր դեպքերում չէ, որ կրում է քաղաքական բնույթ: Սովորական այդ տիպի սոցիալական լարվածությունը մեղմվում և լուծվում է երբեմն առանց իշխանական մարմինների

միջամտության: Սոցիալական լարվածության քաղաքական բնույթը անմիջականորեն պայմանավորվում է իշխանությունների կողմնորոշվածությամբ, այսինքն, երբ իշխանությունները ուղղակի կամ անուղղակի մասնակից են դառնում լարվածության ստեղծմանը: Քաղաքական բնույթ կրող սոցիալական լարվածությունը կարող է հասցնել այնպիսի մի աստիճանի, երբ մասսաները դառնան այդ լարվածության ակտիվ կրողները: Այդպիսի դեպքերում հաճախ անկառավարելի է դառնում սոցիալական լարվածությունը և այն վերածվում է քաղաքական հակամարտության:

Քաղաքական կոնֆլիկտոլոգիայի ձեռնարկներում տարբեր տեսանկյուններով են տրվում քաղաքական հակամարտության սահմանումները: Նշենք դրանցից մի քանիսը: Վ. Պ. Պերեվալովի կարծիքով քաղաքական հակամարտությունը ճգնաժամային դրության հետևանքով ստեղծված քաղաքական իրավիճակ է, որը բնութագրվում է տիրապետող վերնախավի նկատմամբ սոցիալական խավերի ծայրահեղ դժգոհությամբ:[2] Վ. Ա. Աչկասովի կարծիքով քաղաքական հակամարտությունը իշխանության հասնելու, արժեքների վերաբաժանման, քաղաքական վարկանիշի փոփոխման և շահերի ու նպատակների իրականացման հետ առնչվող քաղաքական սուբյեկտների ընդհարումն է:[3] Վ. ի. Կալաշնիկովի բնորոշումով քաղաքական հակամարտությունը շահերով, արժեքներով, նպատակներով և հայացքներով պայմանավորվող քաղաքական սուբյեկտների պայքար է:[4] Մեր կարծիքով քաղաքական կոնֆլիկտի ավելի ըդհանրացված և հավաստի բնորոշումը տրվել է Մոսկվայի Պետական համալսարանի և Դ. Ի. Մենդելեևի անվան համալսարանի պրոֆեսոր Գ. Ի. Կոզիրևի կողմից: Նրա բնորոշումով քաղաքական կոնֆլիկտը երկու և ավելի քաղաքական սուբյեկտների ընդհարում է, որի պատճառներն են հանդիսանում անհամատեղելի քաղաքական շահերը, նպատակներն ու արժեքները, որոնք անմիջականորեն կամ միջնորդավորված կերպով կապված են քաղաքական իշխանության հետ: Քաղաքական կոնֆլիկտի հիմնական օբյեկտ կարող է հանդիսանալ իշխանությունը:[5] Վերը

---

[2] Տես՝ В. Д. Перевалов, Политология., М., 2003г., стр.157.
[3] Տես՝ В. А. Ачкасов, В. А. Гутарова. Политология. М., 2008г., стр.551.
[4] Տես՝ В. Л. Калашников, С. Б. Лугвин. Политология. М., 2008г., стр.147.
[5] Տես՝ Г. И. Козырев, Политическая конфликтология. М., 2008г., стр148.

մենք ընդգծել ենք, որ քաղաքական կոնֆլիկտի առաջացման օբյեկտիվ նախապայման է հանդիսանում քաղաքական կամ սոցիալական լարվածությունը: Սակայն քաղաքական լարվածությունը նույնպես իբրև հասարակական երևույթ ունի իր պատճառական կապերը: Կոնֆլիկտոլոգիական ուսումնասիրություններում ընդգծվում են լարվածության ստեղծման տարբեր պատճառներ: Դրանցից են համարվում կոնֆլկտային կողմերի նպատակների հակասականությունը, մարդկանց դժգոհությունը իրենց քաղաքական և սոցիալական իրավիճակից, մարդկանց համոզմունքն այն մասին, որ իրենց առաջադրած պահանջները փականքի տակ են և այլն: Գ. Ի. Կոզիրևը քաղաքական լարվածության առաջացման հիմնական պատճառներ է համարում.

ա) հակամարտության կողերի հարաբերություններում ազդարարվող մտացածին արժեքների և իրականի արտառոց տարբերությունը,

բ) հակամարտության սուբյեկտների համոզմունքը, որ իրենց առաջադրած պահանջները գտնվում են լուրջ սպառնալիքի տակ,

գ) հակամարտության սուբյեկտներից մեկը փաստորեն հնարավորություն չունի իրականացնելու իր շահերը,

դ) իշխանությունների ոչ միարժեք մոտեցումը կոնֆլիկտի սուբյեկտների առաջադրած խնդիրներին:[6]

Քաղաքագետների մեծ մասը այն կարծիքին է, որ քաղաքական կոնֆլիկտները վերջին հաշվով բխում են հասարակության մեջ գործող սոցիալական հարաբերություններից և բնականաբար անմիջականորեն առնչվում են իշխանության գործունեության հետ: Իշխանության քաղաքականությունը փաստորեն հանդիսանում է կոնֆլիկտ ծնող գործոն: Պետության ամենօրյա կյանքում օբյեկտիվորեն բախվում են սոցիալական ու քաղաքական հիմնախնդիրներ, որոնք էլ հիմք են հանդիսանում կոնֆլիկտային վիճակի ստեղծման համար: Ֆրանսիական հասարակագետ Պ. Բուրդյեի տեսակետով քաղաքական կոնֆլիկտների նախապայման կարող է հանդիսանալ հասարակության սոցիալական խավերի միջև տնտեսական, մշակութային, վարկանիշային կապիտալի անհավասար բաշխումը: Դասակարգերի, սոցիալական խմբերի,

[6] Տես՝ там же, стр 247.

ֆրակցիաների բարդ կառուցվածքը, ինչպես նաև կապիտալի ամբողջությունը իբրև «սեփականություն» հանդիսանում է սոցիալական այն տարածքը, որտեղ ձևավորվում է քաղաքական կոնֆլիկտների հիմքը: Քաղաքական, տնտեսական, հոգևոր և այլ բնույթի կոնֆլիկտները սոցիալական տարբեր ուժերի բախումներն են շահերի պաշտպանության համար: Կոնֆլիկտները հասունանում են ոչ միայն տնտեսական, քաղաքական, հոգևոր ասպարեզներում, այլ նաև մարդկանց գլուխներում՝ իբրև ծրագրեր իշխանության վարկանիշի ու դերի վերակառուցման համար:[7]

Այսպիսով, քաղաքական լարվածությունը անհրաժեշտության աստիճանի հասնող օրինաչափ երևույթ է, որը ձևավորվում է քաղաքական կյանքում հնացած, իր ժամանակն արդեն ապրած և քարացածության աստճանի հասած հարաբերությունների անհրաժեշտաբար վերափոխման պահանջով: Կոնֆլիկտային քաղաքական լարվածությունը կայանում է որոշակի փուլերով, վերելքի ու վայրէջքի աստիճաններով: Քաղաքագիտական ուսումնասիրություններում լարվածության աստիճանների կայացումը հիմնավորվում է հասարակության կյանքում արմատավորվող տարբեր իրադրություններով: Այդպիսի իրադրություններից են համարվում հասարակության լայն շրջաններում իշխանությունների գործունեության նկատմամբ դրսևորվող դժգոհությունը, տեղի ունեցող մասշտաբային փոփոխությունների, ռեֆորմների հեռանկարների հանդեպ կասկածամտանքը, իշխանության գործունեության նկատմամբ վստահության կորուստը, կայացած հիմնահարցերը անհետաձգելի միջոցներով լուծելու գիտակցումը և այլն: Եթե ձեռնարկվող միջոցառումները ի վիճակի չեն լինում վերացնելու ստեղծված լարվածությունը, վերաճում է կոնֆլիկտների:

Քաղաքականության զարգացման գործընթացը հիմնվում, կառուցվում է որոշակի շահերի վրա, և բնականաբար նրան ներհատուկ է կոնֆլիկտային իրավիճակը: Յուրաքանչյուր կոնֆլիկտային իրավիճակ ստեղծվում է որոշակի գործոնների առկայության պայմաններում: Ավելի լայն բնույթի քաղաքական հակամարտությունների որոշիչ գործոններից է հանդիսանում

[7] Տես՝ В. А. Ачкасов, В. А. Гуторова. Политология., М. 2008г, стр550-551.

գործող սոցիալական համակարգը: Այստեղ որոշիչ դերակատարություն կարող է ունենալ հատկապես տոտալիտար համակարգը: Այսպիսի հասարակարգում իշխանության գլուխ կանգնած քաղաքական էլիտան առաջադրում է ողջ հասարակության համար գործող միասնական շահի ու միասնական նպատակի գաղափարը, որի համաձայն հասարակական բոլոր խավերը ունեն նույն իրավունքները և բարեկեցության միանման հնարավորությունները: Հետևաբար, բացառվում են շահերից ու նպատակներից բխող հակասությունները, որոնք կարող են վերաճել քաղաքական կոնֆլիկտների: Այսպես, հայտնի է, որ Հոկտեմբերյան հեղափոխությունից անմիջապես հետո ռուսական կայսրության տարածքում բոլշևիկյան կուսակցությունն իբրև ապագա հասարակական հարաբերությունների ուղենիշ առաջադրեց «հողը գյուղացուն, գործարանը բանվորին, իշխանությունը սովետներին» կարգախոսը: Այս կարգախոսի առաջնորդությամբ բացառվեց սոցիալական դասակարգերի միջև ծագող որևէ հակասություն: Իսկ կայսրության տարածքում ապրող բոլոր ազգերին ու ազգություններին խոստում էր տրվում ինքնորոշվելու և համախմբվելու ազգերի Լենինյան եղբայրության մեծ ընտանիքում: Համընդհանուր շահերի ու նպատակների մասին կառուցված գաղափարական դոկտրինայի համաձայն ԽՍՀՄ-ի գոյության ողջ ժամանակահատվածում քաղաքագիտական գրականության մեջ իշխում էր այն հաստատումը, որ սոցիալիզմի պայմաններում հող չի կարող լինել սոցիալական կամ քաղաքական հակամարտությունների ձևավորման համար: Ինչ վերաբերում է իշխանական համակարգին, ապա այնտեղ ծագող յուրաքանչյուր վիճարկելի հիմնահարց կրում է ժամանակավոր բնույթ և լուծվում են առանց խոչընդոտների: Քաղաքական կոնֆլիկտների առաջացման գործոն կարող է լինել նաև ավտորիտար ռեժիմը: Այսպիսի ռեժիմի պայմաններում կոնֆլիկտները ձևավորվում են հատկապես տնտեսական, մշակութային, կենցաղավարական ասպարեզներում: Դա հնարավոր է կոլիկտիվի ու վարչական չինովնիկների միջև ծագող հակասությունների պայմաններում: Այսպիսի դեպքերում քաղաքական էլիտան ձգտում է կոնֆլիկտային երևույթը հնարավորության սահմաններում չհասցնել քաղաքական բնույթի, և սովորաբար կոնֆլիկտները լուծվում է իշխանական մարմինների

միջամտությամբ: Սակայն վարչական բնույթ կրող կոնֆլիկտը ավտորիտար ռեժիմի պայմաններում հաճախ հասնում է քաղաքական աստիճանի ու բնականաբար ազդում է տիրող ռեժիմի վարկանիշին: Այսպիսի դեպքերում անգիջում է հանդես գալիս քաղաքական վարչակազմը և խստագույնս պատժվում են կոնֆլիկտի հարուցողները: Կարելի է բերել մի քանի օրինակներ: Այսպես, 1965 թվականին խորհրդային ավտորիտար ռեժիմի պայմաններում Հայաստանի իշխանությունների կողմից, հատկապես այն ժամանակվա Հայաստանի Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղարը Յակով Զարուբյանի ջանքերի շնորհիվ համաձայնություն ձեռք բերվեց պետական մակարդակով Հայաստանի Հանրապետությունում նշել հայկական ցեղասպանության կայացման 50-ամյակը: Սակայն Երևանում տեղի ունեցող հանդիսավոր նիստի ժամանակ անհեռատես որոշ անձանց կողմից կազմակերպված հրապարակային խախտումների հետևանքը չափազանց բարձր գին ունեցավ Հայաստանի Հանրապետության քաղաքական վարկանիշի համար: Կենտրոնական իշխանությունները Երևանում տեղի ունեցած անկարգությունը որակավորեցին որպես հայական նացիանալիզմի դրսևորման հերթական արտահայտություն: Աշխատանքից ազատվեց Հայաստանի Կոնկուսի առաջին քարտուղարը, ձևնարկվեցին այսպես կոչված «հայկական դաշնակցական նացիոնալիզմի» դրսևորումների դեմ պայքարի միջոցառումների մի շղթա, որից, ի դեպ, տուժեց նաև Լեռնային Ղարաբաղի հայությունը: Դա ձեռնտու առիթ դարձավ Ղարաբաղի ինքնավար մարզի պետական անվտանգության մարզային կոմիտեի համար՝ բացարձակ հալածանք սկսելու մարզի մի խումբ մտավորականների նկատմամբ, մեղադրելով նրանց Հայաստանից դաշնակցական նացիոնալիզմը Ղարաբաղ ներմուծելու մեջ: Ճշմարտությունը չկեղծելու համար անհրաժեշտ է ընդգծել, որ պետական անվտանգության աշխատողներին հաջողվեց մարզի կուսակցական մարմինների աջակցությամբ որոշ երկպառակտում սերմանել լեռնային Ղարաբաղի մտավորականության շրջանում: Տնտեսության, կառավարման համակարգի, մշակույթի բնագավառներում գտնվեցին մտավոր աշխատանքի մարդիկ, որոնք հանդես գալով ինտերնացիոնալիզմի և խորհրդային ժողովուրդների եղբայրության

անունից, դատապարտում էին «դաշնակցական նացիոնալիզմը»: Քաղաքական կոնֆլիկտների առաջացման գործոն կարող է հանդիսանալ նպատակաուղղված շանտաժի և ահաբեկչության կիրառումը իշխանությունների կամ սոցիալական տարբեր խմբերի կողմից: Օրինակ կարող է հանդիսանալ գերմանական ֆաշիզմի պարտզլուխների կողմից 1933 թվականին Ռեյգխստագի շենքի հրդեհի կազմակերպումը, որը նպատակաուղղված էր գերմանական կոմունիստական կուսակցության հաշվեհարդարին: Ժողովրդավարական երկրներում քաղաքական կոնֆլիկտների առաջացման գործոններից է հանդիսանում ընտրությունների ընթացքում կուսակցությունների միջև ծագող հակասությունները, որոնք հաճախ վերածվում են քաղաքական կոնֆլիկտների: Քաղաքական կոնֆլիկտի առաջացման գործոն կարող է հանդիսանալ քաղաքական մշակույթի անհամեմատ՝ ցածր մակարդակը: Օրինակ է հանդիսանում, երբ ազգային խորհրդի նիստերի ժամանակ որոշ պատգամավորներ նույնիսկ դիմում են ուժի գործադրման միջոցի: Այսպիսի երևույթներ են տեղի ունեցել Ռուսաստանի Դաշնության Պետդումայի, Ուկրաինական Ռադայի, Հայաստանի Ազգային Ժողովի նիստերի ժամանակ: Քաղաքական մշակույթի ցածր մակարդակի արտահայտություններից էր նաև 2008թ. մարտին Հայաստանում տեղի ունեցած ընդդիմության և իշխանական մարմինների ընդհարումը: Քաղաքական կոնֆլիկտների առաջացման գործոններից է նաև իշխանությունների կողմից դիտավորյալ կերպով շինծու կոնֆլիկտային իրավիճակի ստեղծումը էթնոսների հարաբերություններում: Դա արվում է իշխանության վարած քաղաքականության արդարացման և կոնֆլիկտային լարվածության ընթացքում մի կողմի շահերի պաշտպանության նպատակով: Այսպես, 1915 թվականին թուրքիական իշխանությունները հայկական ցեղասպանության ոճիրը արդարացնելու և թուրքական շովինիզմին օրինական տեսք տալու նպատակով փորձեցին աշխարհին համոզել, որ պատերազմի պայմաններում Թուրքիայի ներքին անվտանգությունը ապահովելու նպատակով տեղահանվել է Թուրքիայի հանդեպ թշնամական ռազմավարություն ընտրած բնակչությունը: Այսպիսի օրինակներով հարուստ է հասարակության պատմությունը, որի հետևանքներ են դարձել պատերազմները, հեղաշրջումները, ցեղասպանությունները,

ահաբեկչությունները: Քաղաքական հակամարտությունների համակարգում ժամանակակից աշխարհում ամենատարածված և ավելի դժվար կարգավորվող հակամարտություն է հանդիսանում էթնոքաղաքական հակամարտությունը: Այս տիպի հակամարտությունները ունեն երկակի բնույթ, այսինքն՝ դրանք ընդգրկում են և՛ էթնիկական, և՛ քաղաքական ասպարեզները: Բարձր կարգի էթնոքաղաքական հակամարտությունները վերջին հաշվով կարգավորվում են քաղաքականության միջոցով: Այդպիսի դեպքերում տարբեր էթնոսների միջև ծագող հակամարտության հիմնապատճառ է դառնում պետությունների վարած քաղաքականությունը: Դա վերաբերում է նաև աղրբեջանա-ղարաբաղյան հակամարտությանը, որի մասին ավելի հանգամորեն կլուսաբանվի հետագա շարադրանքում:

2. ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Սոցիալական հակամարտություն կատեգորիան բավականին լայն ու բազմաբովանդակ իմաստ ունի: Այն արտահայտում է հասարակության սոցիալական կառուցվածքում դրսևորվող բազմաբնույթ հակամարտությունների ամբողջությունը: Սոցիալական հակամարտության դրսևորումներից մեկը էթնոքաղաքական հակամարտությունն է: Սոցիալական հակամարտությունների ընդհանուր համակարգում էթնոքաղաքական հակամարտության որոշիչ առանձնահատկություններից մեկն այն է, որ այս տիպի հակամարտության սուբյեկտներ են հանդիսանում էթնիկական խմբերը, որոնք ձգտում են պաշտպանել իրենց շահերը քաղաքական կյանքում, ընդհուպ մինչև իշխանության վերաբաժանումը: Էթնոքաղաքական հակամարտության մյուս առանձնահատկությունն այն է, որ այն պարունակում է քաղաքական իմաստ և հետապնդում է քաղաքական նպատակ: Ուրեմն, էթնոքաղաքական հակամարտությունը ունի երկու կողմ, երկու բնույթ՝ էթնիկական և քաղաքական: Գ. Տ. Թավադովի բնորոշմամբ էթնիկական հակամարտությունը բոլոր դեպքերում քաղաքական է,

որովհետև մշակութա-լեզվային, սոցիալ-տնտեսական և մյուս ազգային նպատակներին հասնելու համար որպես կանոն օգտագործվում են քաղաքական ուղիներն ու մեթոդները:[8]

Էթնոքաղաքական հակամարտության գիտատեսական բնորոշման համար անհրաժեշտ է պարզել, թե ինչ պետք է հիմք ընդունել այդ տիպի հակամարտության գոյացման և նրա կոնկրետ իրողության համար: Ըստ Ա. Ռ. Ակլաևի, սոցիալական կոնֆլիկտների գոյավորման ու կայացման հիմնավորման առումով քաղաքագետների կողմից արտահայտվել են երկու կարծիքներ: Մի կարծիքի համաձայն սոցիալական հակամարտությունը համարվում է կայացած, երբ սուբյեկտների միջև եղած հակասությունները վերածվում են բացարձակ հակամարտ բախումների: Մյուս կարծիքի համաձայն սոցիալական հակամարտությունը հիմնավորվում է սուբյեկտների հակասությունների սկզբնավորումով, այսինքն՝ հակամարտությունը բովանդակում է նաև այն ժամանակահատվածը, երբ սուբյեկտների միջև եղել են հակասություններ, բայց դեռևս չեն վերածվել բացառիկ հակամարտ բախումների:[9] Ա. Ռ. Ակլաևը այսպիսի երկակի կարծիքը կիրառելի է համարում նաև էթնոքաղաքական հակամարտությունների գոյավորման ու կայացման գործընթացի մեկնաբանման համար, ավելի շատ հակված լինելով՝ պաշտպանելու երկրորդ կարծիքը: Անշուշտ, տվյալ մեկնաբանությունը կարևորվում է նաև ղարաբաղյան հակամարտության գոյավորման ու կայացման գործընթացը ճիշտ ըմբռնելու և գնահատելու համար: Այստեղ կարևորում ենք ընդգծել, որ 1921 թ. հուլիսի 5-ի Ռուսաստանի Կոմկուսի Կովբյուրոյի հանրահայտ որոշումով Լեռնային Ղարաբաղի նկատմամբ կատարվել են երկու կոպիտ խախտումներ:

ա. Բռնի կերպով, առանց երկրամասի բնակչության կարծիքը հարցնելու պատմական Հայաստանի այդ տարածքը յուրացվել ու տրվել է հարևան, նոր կազմավորված հանրապետությանը:

բ. Փաստորեն մասնատվել է նաև հայ ազգը, անջատելով էթնոսի մի մասը՝ մյուսից: Այս որոշումով սկիզբ է առնում նաև Ղարաբաղի հայության էթնոքաղաքական պայքարը սոցիալական նոր պայմաններում՝ խորհրդային տոտալիտար իրավակարգում:

[8] Տես՝ Тавадов Г. Т., Этнология., М. 2002г. стр. 308-309.

[9] Տես՝ А. Р. Аклаев, Этнополитическая конфликтология, М., 2008г, стр. 21-22.

Ղարաբաղյան պայքարի ռազմավարության հիմքում ի սկզբանե դրվել է քաղաքական իմաստով Ադրբեջանից անջատումը:

ԼՂՀ իշխանությունների ձեռնարկումով և հասարակության ակտիվ մասնակցությամբ 2008թ. հանդիսավորություններով նշվեց ղարաբաղյան շարժման 20-ամյակը, հիմք ընդունելով ԼՂ մարզխորհրդի 1988թ. փետրվարյան նստաշրջանի որոշումը՝ Լեռնային Ղարաբաղը ՀՀ-նն վերամիավորելու մասին: Այս տեսանկյունով հիմնահարցին մոտենալու դեպքում ստացվում է, որ ղարաբաղյան հակամարտության էությունը, նրա պատմական բնույթը իբրև հասարակական երևույթի, իբրև էթնոքաղաքական հակամարտություն ծագել, ձևավորվել է 1988թ.: Գուցե՞ նույնիսկ այդպիսի մոտեցումը նպաստի ադրբեջանական կողմին՝ հայտարարելու, որ մինչև 1988 թվականը Լեռնային Ղարաբաղում դժգոհություն կամ հակասություն չի արտահայտվել տեղի հայության կողմից ադրբեջանական իշխանությունների վարած ազգային քաղաքականության նկատմամբ: Ուստի ամբողջ մեղքը վերագրվում է «հայկական նացիոնալիզմին», որը 1980-ականների վերջերին Ղարաբաղ է ներթափանցել Հայաստանից: Իսկ մեզ համար բնականաբար հարց է առաջանում, որ եթե ղարաբաղյան հակամարտության սկիզբ է համարվում 1988 թվականը, ապա Լեռնային Ղարաբաղի խորհրդային ժամանակաշրջանի պատմության որ մասում կարելի է տեղավորել անցյալ դարի 20-ական թվականներից մինչև 80-ականների վերջերը տեղի ունեցած բազմաթիվ ազատագրական ելույթները, ընդհարումները և բազում անգամ ադրբեջանական իշխանությունների կողմից պաշտոնապես դատապարտված "հայկական նացիոնալիզմի դրսևորումը ԼՂԻՄ-ում,,, Ստեփանակերտի ավտոբազայի բանվորների բողոքի ցույցը, քաղաքական և մշակույթի 13 նշանավոր գործիչների դիմումը՝ ուղղված ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդին և նախարարների խորհրդին, մարզի մտավորականության մի մասի պարտադրված էմիգրացումը և այլ իրողություններ: Ուրեմն, ղարաբաղյան հակամարտության գոյավորման ու զարգացման պատմական գործընթացի ուսումնասիրությանը դիալեկտիկական մեթոդոլոգիայով մոտենալու դեպքում հստակ կերպով կարելի է ասել, որ այդ հակամարտությունը, առավել ևս ղարաբաղյան շարժման ակտիվ գործընթացը, սկսվել է առաջին աշխարհամարտի

ավարտումով: Այստեղ մենք կանգ չենք առնում 1918-21 թվականներին դարաբաղյան հիմնախնդրի հետ կապված քաղաքական իրադարձությունների վրա, քանի որ դրանք հանրահայտ են, և բազմաթիվ գիտական հրապարակումներում բացահայտվել են Լեռնային Ղարաբաղը անօրեն հիմունքներով Խորհրդային Ադրբեջանին բռնակցելու պատճառները: Հարկ ենք համարում ընդգծել միայն, որ եթե անժխտելի է այն փաստը, որ Ադրբեջանում խորհրդային իրավակարգի գոյատևման ողջ ժամանակահատվածում առկա են եղել մշտական, արմատական հակասությունները երկու սուբյեկտների՝ Լեռնային Ղարաբաղի հայության և ադրբեջանական իշխանությունների միջև, ապա անժխտելի է նաև այն, որ այդ հակասությունները միշտ էլ հղի են եղել պայթունավտանգ հետևանքներով: Պարզապես ընդհարման համար իրավիճակը ստեղծվել է խորհրդային իրավակարգի քայքայման նախաշեմին, երբ Ղարաբաղի հայ բնակչությունը միանշանակ որոշել է ազատվել Ադրբեջանի տիրապետությունից, իսկ ադրբեջանական իշխանություններն էլ ի վիճակի չեն եղել այլևս Ղարաբաղին իշխել նախկինի պես:

Կոնֆլիկտոլոգիական ուսումնասիրություններում տարբերակվում են քաղաքական և էթնիկական բնույթի հակամարտությունները, չնայած էթնիկական հակամարտությունը բոլոր դեպքերում կրում է նաև քաղաքական բնույթ: Քաղաքական և էթնիկական հակամարտությունները սոցիալական հակամարտությունների ընդհանուր համակարգի մասնիկների արտահայտություններ են, ինչպես իրենց ընդհանրական հատկանիշներով, այնպես էլ առանձնահատկություններով: Քաղաքական հակամարտությունը կայանում է զուտ քաղաքական շահերի հիմքերի վրա: Այդպիսիք կարող են հանդիսանալ իշխանության բաժանման ժամանակ դիրքերի գրավումը, ռազմավարական ծրագրերի նպատակաուղղվածությունը, իշխանական մարմինների կառուցվածքը, տնտեսական հիմնախնդիրների լուծման եղանակների սահմանումը և այլն: Հետևաբար, քաղաքական հակամարտությունը գոյավորվում է քաղաքական կյանքի որոշակի ասպարեզում սուբյեկտների գրաված հակամարտ դիրքերի հետևանքով: Այն տեղի է ունենում հակամարտության սուբյեկտների ունեցած առանձնահատուկ

կեցվածքի ու նպատակների հիմքերի վրա: Էթնիկական հակամարտությունը ավելի շատ մշակույթների և քաղաքակրթվածության ընդհարումների բնույթ ունի: Էթնոքաղաքական հակամարտությունը տնտեսական, սոցիալական, մշակութային, տերիտորիալ գործոնների անհավասարության պայմաններում երկու տարբեր էթնոսների միջև ծագող հակասությունների հիմքերի վրա կայացող հասարակական այնպիսի երևույթ է, որն անմիջապես կապված է պետության քաղաքականության հետ: Էթնոքաղաքական հակամարտությունը կարող է կայանալ ինչպես երկու տարբեր էթնիկական խմբերի, այնպես էլ որևէ էթնիկական խմբի և իշխանության միջև: Սակայն բոլոր դեպքերում այն տեղի է ունենում էթնիկական հողի վրա: Ուստի յուրաքանչյուր էթնոքաղաքական հակամարտություն իր էությամբ և՛ քաղաքական է, և՛ էթնիկական: Քաղաքականությունից անջատ միջէթնիկական հակամարտություն չի կարող լինել: Էթնոսը սոցիալական մյուս ընդհարություններից տարբերվում է օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշներով: Էթնոսի կազմավորման ու կայացման օբյեկտիվ չափանիշներ են հանդիսանում ազգային հոգեբանությունը, բնակության տարածքը, տնտեսական համակարգը, լեզուն, մշակույթը, ավանդույթների ամբողջությունը: Էթնոսի կազմավորման սուբյեկտիվ հատկանիշ է համարվում անհատի էթնիկական ինքնագիտակցությունը: Գերակայող կարծիքի համաձայն տվյալ էթնիկական խմբին (ազգին, ազգությանը) են պատկանում բոլոր այն անհատները, որոնց մոտ իշխում է էթնիկական ինքնագիտակցությունը, անկախ այն բանից, թե որտեղ է ապրում, ինչ լեզվով է խոսում և այլն: Եթե անհատի մոտ գերիշխում է էթնիկական ինքնագիտակցությունը, ապա նույն անհատը իր ապրելակերպով, հոգևոր աշխարհով տարբերվում է մյուս էթնիկական խմբերից: Այս տարբերությունը որոշակի պայմաններում, որոշակի հարաբերություններում կարող է վերածվել հակասության, ապա նաև հակամարտության: Էթնիկական հակամարտության կողմերից մեկը անպայման որևէ էթնիկ խումբ է՝ իր հոգեբանական, լեզվային, մշակութային, ավանդական հատկանիշներով հանդերձ: Էթնիկական հակամարտությունը կարող է տեղի ունենալ երկու տարբեր էթնիկ խմբերի, արմատական ազգերի, արմատական ազգի և էթնիկ փոքր խմբի, ինչպես նաև էթնիկ փոքր խմբի և իշխանության

միջև: Արմատական էթնիկ խմբերի հակամարտությունների օրինակներ կարող են հանդիսանալ 20-րդ դարում ձևավորված արաբա-իսրայելական, իրանա-իսրայելական հակամարտություններ: Վերջինիս ծայրահեղական իմաստը հասել է այն աստիճանի, երբ Իրանի Իսլամական Հանրապետության նախագահ Ահմադինեջադը հայտարարել է, թե Մերձավոր արևելքում Իսրայելական պետություն չպետք է լինի: Մինչդեռ ղարաբաղյան հակամարտությունը դրսևորվել է Ղարաբաղի հայության և ադրբեջանական իշխանությունների միջև: Ղարաբաղյան կողմը հակամարտության ողջ գործընթացում ոչ մի անգամ ադրբեջանական էթնոսի հանդեպ թշամական որևէ հրապարակային հայտարարությամբ հանդես չի եկել: Ադրբեջանի իշխանությունները միշտ էլ ձգտել են հակամարտությունը ներկայացնել իբրև երկու արմատական էթնիկական սուբյեկտների՝ հայերի և ադրբեջանցիների հակամարտություն, ողջ մեղքը բարդելով հայական կողմի վրա: Ցավալի է, որ այսպես կոչված երրորդ կողմ ներկայացնող քաղաքական որոշ տեսաբաններ լավ տեղյակ չլինելով ղարաբաղյան հակամարտության հիմնապատճառներին, այն ներկայացնում են որպես երկու ազգերի՝ հայերի և ադրբեջանցիների հակամարտ հարաբերությունների հետևանք: Այսպիսի դիրքորոշումով է մեկնաբանում ղարաբաղյան հակամարտության կայացումը, պրոֆ. Վլադիմիր Մալցևը, այն անվանելով հայ և ադրբեջանական ազգերի հակամարտություն:[10]

Ժամանակակից աշխարհի 200-ից ավելի պետությունների բացարձակ մասն ունի բնակչության խառն էթնիկական կառուցվածք: Իսկ այդպիսի կառուցվածք ունեցող պետությունների մեծ մասում առկա են էթնոքաղաքական հակասությունները, որոնք հղի են ռազմական ընդհարումների վտանգներով: Էթնոքաղաքական հակամարտությունները բացահայտ, և թվում է, թե անլուծելի են դարձել հատկապես նախկին ԽՍՀՄ-ի և Հարավսլավական Դաշնային Հանրապետության տարածքներում: Հասարակագետների հաշվումներով միայն 1990-99 թվականներին այդպիսի հակամարտությունների զոհ են դարձել 6 միլիոն մարդ: ՄԱԿ-ի տվյալներով 1978-1997 թվականներին էթնոքաղաքական

[10] Տես՝ В. А. Мальцев, Основы политологии, Москва, 1997г., стр. 401-402

հակամարտությունների հետևանքով աշխարհում փախստականների թիվը աճել է 4 անգամ՝ հասնելով 17 միլիոնի: Իսկ նյութական վնասները հասնում են աստղաբաշխական գումարների: Նույն տվյալների համաձայն, էթնոքաղաքական հակամարտությունները խաղաղ հանգուցալուծման համար ծախսվող գումարները 1986 թվականից սկսած յուրաքանչյուր նոր տարի աճում են առնվազն 10 անգամ: Եթե 1986թ. այդ նպատակով ծախսվել է ընդամենը 200 միլիոն ԱՄՆ դոլար, ապա 1994թ. այդ թիվը հասել է 3 միլիարդ դոլարի:[11] Բերված փաստերը վկայում են, թե էթնոքաղաքական հակամարտությունների աճող տեմպերը ինչպիսի ահավոր վտանգ են հանդիսանում աշխարհի ժողովուրդների խաղաղ կյանքի ապահովման գործում: Հետևաբար, էթնոքաղաքական կոնֆլիկտոլոգիայի առարկայի հիմնախնդիրների ընդհանուր համակարգում կարևորվում է էթնոքաղաական հակամարտությունների ծագման արմատների ու դրանց զարգացման պատճառական կապերի դրսևորման գործընթացի բացահայտումը, ելնելով հասարակության պատմական զարգացման փուլերում տեղի ունեցած համաշխարհային նշանակության իրադարձություններից: Հասարակության սոցիալական կառուցվածքի ամենահին ու ամենակայուն տարրը էթնոսն է: Էթնիկական խմբերի ձևավորումը և էթնիկական հարաբերությունների ծագումը միասնական և անբաժանելի գործընթաց է, որտեղ օբյեկտիվորեն ձևավոնվել են նաև միջէթնիկական հակասությունները: Պատմական զարգացմանը զուգընթաց աշխարհի տարբեր տարածաշրջաններում, իսկ հետագայում նաև առանձին երկրներում առաջացել են պատճառական տարբեր կապեր էթնիկական հակասությունների ծագման համար, որոնք բնականաբար վերածվել են նաև բացահայտ հակամարտությունների: Յուրաքանչյուր կոնկրետ մասնավոր էթնոքաղաքական հակամարտության ձևավորումն ու կայացումը նշանավորվում է որոշակի առանձնահատկություններով: Այստեղ չեն կարող գործել նույնանման ու պարտադրված սկզբունքներ: Այս առանձնահատկություններով էլ հաճախ պայմանավորվում է նաև հակամարտության նպատակաուղղվածությունը: Մի դեպքում

[11] Տես՝ А. Р. Аклаев, Этно-политическая конфликтология, М., 2008г., стр.32-33.

նպատակ կարող է հանդիսանալ պետության ներսում էթնիկական խմբի միացորությունների, լեզվի ու մշակույթի վարկանիշի բարձրացումը, մեկ այլ դեպքում էթնիկական ինքնավարության ստեղծումը, երրորդ դեպքում ինքնորոշման իրավունքի ձեռքբերումը և այլն: Էթնոքաղաքական հակամարտությունների առանձնահատկությունների բնորոշման տեսադաշտում թերևս դարաբաղցիները ունեն ավելի լուրջ ու համոզիչ հիմնավորումներ դարաբաղյան հակամարտության առանձնահատկությունը շեշտելու համար, որպես ազգային ինքնորոշման իրավունքի նպատակակետին հասնելու արդարացուցիչ պայմանի: Բանը նրանումն է, որ պատմականորեն որևէ ժամանակ, որևէ անգամ, որևէ պայմանագրով կամ իրավական որևէ ակտով Լեռնային Ղարաբաղը երբևէ Ադրբեջանի տարածքի մաս չի կազմել:

Էթնոքաղաքական հակամարտությունների առանձնահատկությունների մասին դրույթը հաճախ օգտագործվում է արտաքին ուժի կողմից, հակամարտող սուբյեկտներից մեկի շահերը պաշտպանելու նպատակով: Այսպես, օգտագործելով էթնոքաղաքական հակամարտության առանձահատկության մասին քարտը, ԱՄՆ-ն աշխարհում կայացող բոլոր հակամարտությունների համեմատությամբ առանձնացնում է սերբա-ալբանական հակամարտությունը և դրա հիման վրա օրինավոր ճանաչում Կոսովոյի անկախությունը, իսկ Թուրքիան հակամարտությունների ողջ համակարգից առանձնացնելով Կիպրոսում ձևավորված հունա-թուրքական հակամարտությունը, օրինավոր է համարում Կիպրոսի հյուսիսում ստեղծված թուրքական հանրապետությունը: Պարզ է, որ այսպիսի «օրինականության» պաշտպանության գործընթացում առկա են ԱՄՆ-ի և Թուրքիայի շահերը:

Էթնոքաղաքական հակամարտությունների առանձնահատկություններով հանդերձ, քաղաքագիտական տեսություններում առաջադրվում է նաև ընդհանրական հիմքեր ունեցող այն պատճառների բացահայտումը, որոնց հետևանքով գլոբալ երևույթ են դարձել էթնիական հակամարտությունները հատկապես 20-րդ դարի երկրորդ կեսերից սկսած: Այդ հիմնախնդրի ուսումնասիրության մեջ արտահայտվում են տարբեր տեսակետներ: Մ. Ա. Գուլիևը, Ի. Դ. Կորոտեցը, Ի. Պ. Չերնոբրովկինը գտնում են, որ էթնոքաղաքական

հակամարտությունների ակտիվացման պատճառներ են հանդիսանում՝

ա. էթնոսի լիդերների կողմից հակամարտության օգտագործումը իշխանության հասնելու համար,

բ. հակամարտության երկու սուբյեկտների կողմից նախկինում ունեցած հակասությունների նորացումը,

գ. միջէթնիկական մրցակցությունը,

դ. էթնոխմբերի ակտիվությունը.[12]

Սակայն, եթե խոսքը վերաբերում է էթնոքաղաքական հակամարտությունների արմատական պատճառներին, ապա մեր կարծիքով ավելի համոզիչ ու տրամաբանական է այն հեղինակների տեսակետը, որի համաձայն ժամանակակից աշխարհում մասսայական բնույթ կրող էթնոքաղաքական հակամարտություններն ու հակասությունները իրենց հիմքում ունեն գլոբալ բնույթ կրող երեք հիմնապատճառներ, դրանք են՝

ա. տարբեր միջոցներով, պատմական տարբեր ժամանակներում էթնիկական տարածքների բռնագրավումը,

բ. գաղութատիրական քաղաքականությունը և գաղութային համակարգի քայքայումը,

գ. էթնիկական բնակչության մասսայական արտագաղթը:[13]

Էթնիկական հակամարտությունների առաջացման ու դրանց ծավալման համար խթան են եղել կայսրությունների կազմավորումը զավթողական պատերազմների միջոցով: Կայսրությունները կազմավորվել են պատմական զարգացման տարբեր փուլերում: Կայսրությունների կազմավորման գործընթացում քաղաքական սահմանները գրանցվել են առանձին անհատների, այսինքն կայսերական լիդերների կամքով, առանց նկատի ունենալու կայսերական իշխանության տակ ապրող էթնոսի ազգային տարածքը, մշակույթը, հավատն ու ավանդույթը:

Այսպիսի բախտի է արժանացել նաև հայ էթնոսը 4-րդ դարում, երբ Հայաստանը բաժանվեց պարսկական ու բյուզանդական կայսրությունների միջև: Իսկ 19-րդ դարի կեսից սկսած մինչև առաջին

---

[12] Տես՝ М. А. Гулиев, И. Д. Коротец, И. П. Чернобровкин, Этнополитология, М., 2007г., стр. 18, 21.

[13] Տես՝ Малькова В. К., Тишков В. А., Этничность и телерантность в средствах массовой информаций, М., 2002г., стр. 41.

աշխարհամարտի ավարտը հզոր պետությունների կամքով փաստորեն կատարվեց աշխարհի բաժանում մեծ երկրների միջև, առանց հաշվի առնելու իրական էթնոտերիտորիալ սահմանները: Բռնագրոսիկ կերպով գրավվեցին Ասիայի և Աֆրիկայի ժողովուրդների էթնոտարածքները, հաճախ նույն էթնոսը բաժանելով մասերի: Դրան զուգընթաց բռնի կերպով միավորվեցին լեզվի, մշակույթի և ավանդույթի ընդհանրություն չունեցող էթնոսներ՝ բաղդատելիության և ժողովուրդների բարեկամության ստեղծման պատրվակի տակ: Էթնոսների այսպիսի բռնազբոսիկ միավորումներ պատարվեցին Բրիտանական Մալազիայում, Բելգիական Կոնգոյում, Ֆրանսիական Մագրիբում, Ալժիրում, Մարոկկոյում: Բնականաբար ձևավորվեցին թշնամական հարաբերություններ դրանցում ընդգրկված էթնոսների միջև:[14] Ի դեպ, 20-րդ դարի վերջերից սկսած Աֆրիկայի ամենամեծ պետությունում՝ Սուդանում բռնկված էթնոքաղաքական կոնֆլիկտը, որը փորձագետների կարծիքով նշանավորվում է երկու միլիոն մարդկային զոհերով, իմպերիալիզմի գաղթակալական քաղաքականության հետևանքներից մեկն է: Սուդանը եզակի երևույթ չէ, Սուդանի օրինակով են կատարվել նաև նախկինում Բանգլադեշում, Կոմբոջայում, Շիրի- Լանկայում դրսևորված ցեղասպանության երևույթները: Այս գործընթացը շարունակական է, որովհետև Ասիայի և Աֆրիկայի նախկին մի շարք երկրներում նույն հիմնահարցը գտնվում է օրակարգում: Իրավամբ կարելի է ասել, որ իմպերիալիստական Եվրոպայի կողմից Ասիայի և Աֆրիկայի երկրներում ձևնարկած զավթողական վերոհիշյալ քաղաքականությունը նոր, կոմունիստական գաղափարախոսության քողարկումով փաստորեն կրկնվեց խորհրդային համայնավարական միության կազմավորման ժամանակ: Անհերքելի օրինակ կարող է այստեղ հանդիսանալ Լեռնային Ղարաբաղի բռնակցումը Խորհրդային Ադրբեջանի Հանրապետությանը 1921 թվականին: Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությանը բռնակցելու պատճառները բացահայտվել են պատմաբանների ու հասարակագետների աշխատություններում: Փիլիսոփայական-տրամաբանական ըմբռնումով է պատմական այս երևույթը մեկնաբանվում փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

[14] Տես՝ А. Р. Аклаев., Этнополитическая конфликтология., М., 2008г., стр. 26-28.

պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանի եզրահանգումով: Գիտնականի համոզմամբ մեծ և հզոր Ադրբեջանի ստեղծման մասին մուսավաթական, ռեակցիոն ազգայնամոլական կարգախոսը անցյալ դարի 20-ական թվականների սկզբներին ժառանգել են բոլշևիկները՝ Արևելքում սոցիալիզմի տարածման համար իբրև օրինակ հզոր «Կարմիր Ադրբեջան» ստեղծելու նպատակով: Այս գաղափարի զոհ է դարձել պատմական Հայաստանի բաղկացուցիչ մասը՝ Լեռնային Ղարաբաղը, որը Մոսկվայի կենտրոնական իշխանության անմիջական նախաձեռնությամբ և Ստալինի անձնական կամքի օգտագործումով, առանց Ղարաբաղի հայության կարծիքի և առանց հիմնահարցի քննարկման, 1921 թվականի հուլիսի 5-ին Ռուսաստանի կոմկուսի Կովկասյան բյուրոյի նիստի արձանագրությամբ բռնակցվեց Ադրբեջանի Խորհրդային Հանրապետությանը:[15]

Էթնոքաղաքական հակասությունների գլոբալ գործընթացի հիմնապատճառներից է մասսայական արտագնացությունը, որը կարելի է ասել անվերահսկելի է դառնում ժամանակակից աշխարհում: Մասսայական արտագնացությունը իր հերթին պայմանավորվում է բազմաթիվ պատճառական կապերով: Մի դեպքում այն արտագաղթ է ֆիզիկական գոյությունը պահպանելու համար, մեկ այլ դեպքում այն թելադրվում է ապրուստի միջոցներ հայթհայթելու պահանջով, երրորդ դեպքում հոգեկան ապրումներն են պատճառ դառնում:

Մասսայական արտագնացության հետևանքով երկրներում տարիների ընթացքում էթնիկական նոր խմբերի ձևավորումը օբյեկտիվ գործընթաց է դառնում: Միջէթնիկական հարաբերությունների ձևավորման հետևանքով ձևավորվում են նաև հակասությունները էթնոսների միջև: Հանդես են գալիս էթնոսների խաղաղ գոյակցության, մուլտիմշակութային օջախների ստեղծման, ղեկավար մարմիններում տեղերի բաշխման, բարոյական նորմերի ու հավատի հարգման և այլ հիմնախնդիրներ: Հասկանալի է, որ այսպիսի հիմնախնդիրների կարգավորումն ու լուծումը ընդունվում են որոշակի խոչընդոտներով, եթե հաշվի առնենք նաև այն, որ բնականից բծախնդրությունն ու ինքնասիրությունը անբաժան են

[15] Տես՝ А. Манасян, Карабахский конфликт, Ереван, 2005г., стр. 162-165.

էթնոսի հոգեկան ապրումներից: Հիշենք թեկուզ դանիական մասնագետ տպագրված Մուհամեդ մարգարեի ծաղրանկարի առիթով եվրոպական երկրներում ապրող մուհամեդական հավատի մարդկանց բողոքի ալիքը, նրանց հոգեկան ապրումները, բծախնդրությունն ու պոռթկումները: Էթնոքաղաքական հակամարտությունների առաջացման խթան կարող է հանդիսանալ մի ազգի, կամ էթնիկական խմբի մյուսին հասցրած դառնությունը: Էթնիկական իմաստով դառնության զգացմունքը եթե չասենք անբուժելի է, ապա առնվազն այն արմատավորվելու ու երկարատև ժամանակով պահպանվելու հատկություն ունի: Այդպիսի զգացմունքը չի լքում հակառակ կողմին անգամ հարյուրամյա անցյալից հետո: Հայկական ցեղասպանությունը թուրք ազգի կողմից հայ ժողովուրդին հասցրած դառնությունը, իսկ ղարաբաղցիների համար դրա հետ մեկտեղ 1920թ. Շուշի քաղաքի հրդեհումը և Ղարսբաղի ավելի քան 50 գյուղերի ավերումը, անշուշտ, իրենց լուրջ հետքերն են թողել երկու էթնոսների հարաբերությունների վրա: Եթե ղարաբաղցիներին հասցված այդ դառնությունը չհաշվենք անցյալ դարի 80-ականներին նոր ալիքով ազատագրական պայքարի պոռթկման որոշիչ պատճառներից մեկը, բայց անհերքելի է, որ պայքարի նոր և հզոր ալիքին նպաստեց դառնության այն զգացմունքը, որը ղարաբաղցու մոտ պահպանվել էր տասնյակ տարիներ շարունակ: Պատահական չէ, որ վերջին տարիներին ղարաբաղցիները հատուկ հանդիսավորությամբ են տոնում Շուշիի ազատագրումը:

Էթնոքաղաքական հակասությունները դրսևորվում են աշխարհի բազմաթիվ երկրներում, անկախ նրանց տնտեսական զարգացման և քաղաքակրթվածության աստիճանից: Էթնոքաղաքական հակասությունների ակտիվացումը արդի ժամանակաշրջանում մտահոգության առարկա է դարձել Ֆրանսիայի, Գերմանիայի, Կանադայի, Բելգիայի և Արևմուտքի այլ երկրների համար: Որոշ քաղաքագետների կարծիքով էթնոքաղաքական հակասությունների սրումը Արևմուտքում կարող է վերածվել ահավոր վտանգների: Հատկապես, եթե հաշվի առնենք այն, որ ի տարբերություն հասարակության քաղաքական կյանքում դրսևորվող մյուս տիպի կոնֆլիկտների, էթնոքաղաքական

կոնֆլիկտն իր էությամբ ավելի հետևողական է, ավելի կայուն է, միջոցների օգտագործման մեջ ավելի անհանդուրժողական:

Ժամանակակից աշխարհում էթնոքաղաքական հակամարտությունների ակտիվացման գործընթացը զուգորդվում է էթնոնացիոնալիզմի գաղափարախոսության հետ: Էթնոնացիոնալիստական գաղափարախոսությունը արտահայտվում է տարբեր ձևով և տարբեր բովանդակությամբ:

Էթնոնացիոնալիզմը միանշանակ բնորոշում չունի: ԽՍՀՄ-ի վարած ազգային քաղաքականության և խորհրդային քաղաքական գաղափարախոսության մեջ առկա էր երկդիմի մոտեցումը էթնոնացիոնալիզմի բնութագրության գործում: Եթե խոսքը վերաբերվում էր միության տարածքում փոքր ազգերի և ազգությունների կողմից ազգային լեզվի ու մշակույթի, ազգային ավանդույթների պահպանման համար ներկայացվող պահանջներին, ինքնավար ազգային կազմավորումների տնտեսական զարգացման, բնապաշտպանության խնդիրներին, ապա էթնիկական խմբերի օրինավոր ձգտումները միանշանակ ներկայացվում էր իբրև անջատողականության հոգեբանություն կամ էլ բուրժուական նացիոնալիզմին տուրք տալու արտահայտություն: Իսկ եթե խոսքը վերաբերում էր Ասիայի և Աֆրիկայի գաղութային և կիսագաղութային երկրների ազատագրական պայքարում ձևավորված էթնոնացիոնալիստական տենդենցներին, ապա այն ներկայացվում էր իբրև օրինավոր պահանջ, որը կայանում է պատմության զարգացման օրինաչափ բնույթի համապատասխան: Իրականում էթնոնացիոնալիզմը իբրև քաղաքական գաղափարախոսական ուղղություն դրսևորվում է տարատեսակներով, որոնք պայմանավորված են որոշակի շահերով և նպատակներով: Այս տեսանկյունով էլ քաղաքագիտության տեսություններում տարբերակվում են էթնոնացիոնալիզմի արտահայտության ռեակցիոն և առաջադիմական ուղղությունները: Էթնոնացիոնալիստական գաղափարախոսության ռեակցիոն արտահայտություններից են հանդիսանում արմատական իսլամիզմը և շովինիզմը: Այս ուղղություններին հատուկ են սեփական էթնոսին, ազգին գերհատկանիշներ վերագրելու, հակադիր կողմին ֆիզիկապես ոչնչացնելու, պոտենցիալ թշնամու կերպար ստեղծելու և այլ

մտացածին գաղափարական սկզբունքների հորինումը և դրանք ազգին, ժողովուրդին սրսկելու նպատակային ձգտումը: Սակայն այսքանով հանդերձ ավելի լիբերալ էթնոնացիոնալիստական գաղափարախոսությունը նաև բացառիկ դեր է կատարում ազատագրական շարժումների գործընթացում: Առաջադիմական-ժողովրդավարական էթնոնացիոնալիստական գաղափարախոսությունը համախմբող և կարգավորող դերակատարություն ունի ինչպես հակամարտությունների գործընթացում, այնպես էլ դրանց կարգավորման ու խաղաղ լուծելու պայմաններում:

3. ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՈՒԲՅԵԿՏՆԵՐԸ ԵՎ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Մենք արդեն վերը նշել ենք, որ էթնոքաղաքական հակամարտություններն իրենց դրսևորման եղանակներով ու տեսակներով բազմազան են: Նրանցից յուրաքանչյուրն արտահայտում է տվյալ կոնկրետ տարածքում բնակվող էթնիկական խմբերի միջև ձևավորված հարաբերությունների համակարգում դրսևորվող մշակույթի, հավատի և այլ արժեքների տարբերությունները, որոնք ստեղծված որոշակի պայմաններում վերածվում են հակասությունների: Հետևաբար, յուրաքանչյուր առանձին հակամարտություն ունի իր առանձնահատկությունը, պատճառն ու հատկանիշը: Այսքանով հանդերձ, քաղաքագետների կարծիքով էթնոքաղաքական հակամարտություններն ունեն նաև ընդհանուր կողմեր: Այդպիսիք կարելի է համարել ազգային ինքնագիտակցության ակտիվացման գործընթացը, հակամարտության ընդգրկման որոշակի տարածքը, հակասությունների լարվածության աստիճանը, սոցիալական յուրահատուկ միջավայրը, որտեղ ձևավորվում է հակամարտությունը և այլն: Հակամարտությունների ձևավորման ու կայացման գործընթացում դրսևորվող մասնավոր և համընդհանուր հատկանիշները պայմանավորվում են օբյեկտիվորեն գործող օրինաչափություններով: Այսինքն հակամարտությունները պատահական, ինչ-որ արտաքին ուժերի կողմից թելադրվող երևույթներ չեն, այլ բխում են հասարակության զարգացման

բնականոն ընթացքից, ներքին հակասություններից, չնայած պատահականություններն, առիթներն ու արտաքին գործոնները նույնպես որոշակի ազդեցություններ են գործում հակամարտությունների գոծընթացի վրա: Ուստի կարևոր նշանակություն է ստանում այն հարցադրումը, թե ինչպիսի հիմնախնդիրներ ունի և ինչպիսի փուլերով է ընթանում ուսումնասիրվող հակամարտությունը: Այսպիսի հարցադրման դեպքում, ըստ երևույթին, անհրաժեշտություն են դառնում էթնոքաղաքական հակամարտությունների այնպիսի հատկանիշների իմացումը, ինչպիսիք են՝ հակամարտության տարածքային ընդգրկումը, հակամարտ սուբյեկտների բնորոշումը, պետության հետ հակամարտության ունեցած հարաբերությունը, հակամարտության հիմնախնդրի սահմանումն ու առանձնահատկությունը և հակամարտության կայացման գործառույթները:

Հակամարտության տարածքային ընդգրկումը կարող է լինել տարբեր չափերի: Այն կարող է սահմանափակվել նույնիսկ մեկ երկրի որևէ շրջանի սահմաններում: Հակամարտությունը կարող է ընդգրկել որևէ երկիր ամբողջությամբ, կամ տարածաշրջան՝ մի քանի երկրների ընդգրկումով: Սակայն բոլոր դեպքերում յուրաքանչյուր հակամարտություն անմիջականորեն ընդգրկում է երկու կողմ: Մյուս կողմերը, անկախ իրենց ակտիվության աստիճանից, ստանում են "երրորդ կողմ„, "կողմնակիցներ„, "աջակցողներ„, "հովանավորներ„, "միջնորդներ„ անունները: Այսպես, ուզբեկների և մեսխեթցի թուրքերի հակամարտությունը 20-րդ դարի 90-ականներին տեղի ունեցավ Ուզբեկստանում, տևեց կարճ ժամանակամիջոց և ավարտվեց թուրքերի արագ տեղահանությամբ: Կանադայում, Իսպանիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում և Արևմուտքի այլ երկրներում էթնոքաղաքական ընդհարումները սահմանափակվում են նույն երկրի շրջանակներում, և սովորաբար երրորդ կամ արտաքին ուժերը չեն մասնակցում այդպիսի ընդհարումներին: Չեչենա-ռուսական, թուրքա-հունական (կիպրոսյան) հակամարտությունները ավելի լայն տարածում և տևական բնույթ են ստացել աջակիցների, հովանավորների և երրորդ այլ ուժերի մասնակցության հետևանքով: Չեչնայում ռուսների դեմ կռվել են վարձկաններ Թուրքիայից: Ղարաբաղում հայերի դեմ կռվել

են վարձկաններ Թուրքիայից: Հարավային Օսեթիայում օսեթների դեմ կռվել են վարձկաններ Ուկրաինայից: Ժամանակակից աշխարհում ամենալայն ճանաչում ստացած էթնոքաղաքական հակամարտությունը արաբա-իսրայելական հակամարտությունն է: Այն ընդգրկում է աշխարհի մի քանի տարածաշրջաններ: Այս հակամարտության երկու հիմնական կողմեր են հանդիսանում իսրայելական հրեական պետությունն ու պաղեստինյան արաբների քաղաքական էլիտան, իսկ աջակցողների, հովանավորների և միջնորդների դերերով մասնակցում են ԱՄՆ-ն, Ռուսաստանը, Մեծ Բրիտանիան, Եգիպտոսը, Իրանը և այլ երկրներ: Հակամարտության տարածքային ընդգրկման չափը հիմնականում պայմանավորվում է հակամարտությանը մասնակցող երկրների սոցիալ-քաղաքական համակարգի կառուցվածքով: Այսպես, արաբա-իսրայելական հակամարտության տարածքային ընդգրկման լայնածավալ բնույթը պայմանավորվում է մի կողմից Արևմուտքի, հատկապես ԱՄՆ-ի սոցիալ-քաղաքական կառուցվածքի շահերով, այսինքն՝ Մերձավոր Արևելքում Արևմտյան համակարգի տիպի հզոր իսրայելական պետություն ունենալու նպատակով և այս տարածաշրջանում Արևմուտքի որոշիչ ազդեցության պահպանման համար: Իսկ մյուս կողմից էլ այս հակամարտությունում պայքար է գնում Մերձավոր Արևելքում շարիաթական սոցիալական համակարգի հիմքերի ամրապնդման համար: Ի դեպ, նմանատիպ միտում է արտահայտվում նաև ղարաբաղյան հակամարտության գործընթացում ադրբեջանական կողմի ձգտումներում:

Օգտագործելով էներգետիկ ռեսուրսների գործոնը, Ադրբեջանը հավակնում է գերակայող դիրք ունենալ Հարավային Կովկասում և շահել մեծ տերությունների աջակցությունը ռազմավարական հիմնահարցերում: Նպատակային այս խնդիրը առնչվում է նաև ղարաբաղյան հիմնահարցի հետ: Ադրբեջանի իշխանությունները ձգտում են ղարաբաղյան հիմնահարցի կարգավորման ոլորտը ներքաշել Թուրքիային և նրա հետ մեկտեղ մյուս մահմեդական երկրներին: Թուրքիան փաստացի ղարաբաղյան կոնֆլիկտում հանդես է գալիս որպես երրորդ կողմ, թեկուզ հենց այն պարզ պատճառով, որ Ադրբեջանին զուգահեռ տնտեսական շրջափակման է ենթարկում Հայաստանին: Ղարաբաղյան կոնֆլիկտի սկզբնավորումով Թուրքիան մշտապես ձգտել է ակտիվ գործընթացի

մեջ մտնել ադրբեջանա-ղարաբաղյան հարաբերություններում, ռազմաքաղաքական ակտիվ աջակցություն ցուցաբերելով Ադրբեջանին: Իսկ Յուրիիսյան հայ-թուրքական արձանագրությունների գործընթացից հետո, երբ Բաքվում ծավալվել են հակաթուրքիական բացարձակ ելույթներ, ապա թուրքական իշխանությունները ենթարկվելով Բաքվի կամքին, հայտարարել են, որ առանց Ադրբեջանի օգտին ղարաբաղյան կոնֆլիկտի լուծման Թուրքիան երբեք չի կարող կարգավորել իր հարաբերությունները հայկական կողմի հետ:

Թուրքական լեզվախմբի երկրների Բաքվում տեղի ունեցած հավաքույթի հայտարարության մեջ շեշտադրվեց ազատագրված տարածքների Ադրբեջանին վերադարձնելու պահանջը: Ադրբեջանի իշխանությունները պարբերաբար խնդիր են դնում հիմնահարցը տեղափոխել ՄԱԿ-ի շրջանակները, հույս ունենալով այս միջոցով օգտվել ՄԱԿ-ի անդամ իսլամական երկրների աջակցությունից:

Իրականության ճանաչման դիալեկտիկական մեթոդոլոգիայի տեսանկյունով յուրաքանչյուր հակամարտություն իրենից ներկայացնում է երկու հիմնական հակադիր սուբյեկտների պայքար: Ճանաչողական այս մոտեցումը վերաբերվում է նաև էթնոքաղաքական հակամարտության ուսումնասիրության գործընթացին: Էթնոքաղաքական հակամարտության հիմնախնդրի բուն էությունը ճանաչելու առաջին պայմանը հակամարտության երկու հիմնական սուբյեկտների սահմանումն է, այսինքն, ովքե՞ր են այդ սուբյեկտները: Հակամարտության ծագման նախնական փուլում սովորաբար արտաքինից այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե հակամարտության սուբյեկտներ են հանդիսանում երկու կողմերի լիդերները: Այսպես, ղարաբաղյան հակամարտության նախնական փուլում Ադրբեջանի իշխանությունները Մոսկվային համոզեցին, որ հակամարտության մեղավորները հայկական կողմի մի քանի լիդերներ են, և նրանց մեկուսացնելու դեպքում ինքնիրեն կմարի հակամարտությունը: Կենտրոնական իշխանությունների հրահանգով 1989-91 թվականներին ադրբեջանական օմոնականները խորհրդային «խաղաղապահների» հետ մեկտեղ ձերբակալեցին շարժման առաջնամարտիկներից շատերին: Ամիսներով նրանք պահվեցին Բաքվի և Ռուսաստանի բանտերում: Սակայն միջոցառումը ոչ միայն չմարեց հակամարտությունը, այլ ավելի թեժ

բնույթ տվեց նրան: Լիդերներն, իրոք, որոշակի դեր են կատարում հակամարտության ընթացքավորման, հակամարտությանը քաղաքական բնույթ տալու, էթնոսի միասնական հոգեբանական կեցվածք ստեղծելու, ուժերի համակենտրոնացման, ավանդույթների վերականգման և այլ գործոններում: Սակայն ինչ վերաբերում է հակամարտության սուբյեկտներին, ապա դրանք կարող են լինել միայն մարդկանց էթնիկական խմբեր: Հակամարտության տարբեր սուբյեկտներ կարելի է անվանել նաև այլ ուժեր: Սակայն բոլոր դեպքերում հակամարտությունն ունի երկու հիմնական կողմ: Ի դեպ, էթնոքաղաքական կոնֆլիկտի կողմ և սուբյեկտ հասկացությունները քաղաքագետների կողմից մեկնաբանվում են մի դեպքում որպես ադեկվատ հասկացություններ մեկ այլ դեպքում տարբերվում են այդ հասկացությունները, ելնելով այն բանից, թե ինչպիսի մասնակցություն ունեն դրանք կոնֆլիկտի գործընթացում: Այս կարծիքի համաձայն կողմեր կարող են կոչվել այն սուբյեկտները, որոնք անմիջականորեն հանդիսանում են կոնֆլիկտի կրողները: Մինչդեռ սուբյեկտներ հասկացությունը վերաբերում է նաև բոլոր նրանց, ովքեր առնչություն ունեն տվյալ կոնֆլիկտի հետ, ելնելով սուբյեկտիվ շահերից: Էթնոքաղաքական հակամարտությունների մեծ մասում հակամարտող խմբերից մեկը սովորաբար փոքր ազգության պատկանող խումբ է, որը պայքարում է ռազմավարական հիմնախնդիրներ լուծելու նպատակով: Մեջբերելով ամերիկյան նշանավոր քաղաքագետ-հրապարակախոս Տ. Գուրրի և քաղաքագետ տեսաբան Մ. Էզմանի պնդումները, Այրատ Ակլանը պաշտպանում է այն տեսակետը, որի համաձայն էթնոքաղաքական հակամարտություններում փոքր ազգությունների խմբերը, իբրև հակամարտության սուբյեկտների, բաժանվում են երկու հիմնական տիպերի՝ էթնոտերիտորիալ խումբ և էթնոսփյուռքային խումբ:

Էթնոսփյուռքային խմբերը ձևավորվում են արտագնացության գործընթացների հետևանքով: Արտագնացությունը տեղի է ունենում հալածանքից փրկվելու, աշխատատեղ որոնելու, կյանքի պայմանները բարելավելու և այլ պատճառներով: Էթնոսփյուռքային խմբերը ձևավորվում են հատկապես արդյունաբերական քաղաքներում, որտեղ միշտ էժան աշխատուժի կարիք կա և մարդկանց ներհոսող խմբերը համաձայնվում են առաջարկվող պայմանների հետ: Այդպիսի էթնիկական խմբեր Արևմուտքի և

Ասիական մի շարք երկրներում ձևավորվել են դեռևս միջնադարում հայ, հրեա և հույն առևտրականների արտագնացության հետևանքով: Հետագայում էթնոսփյուռքային խմբեր են ձևավորվել Արևմուտքի համարյա բոլոր երկրներում՝ Ասիական և Աֆրիկյան երկրներից արտագաղթած հազարավոր նոր բնակիչների հաշվին: Գործընթացը ավելի լայն թափ ստացավ երկրորդ աշխարհամարտից հետո, երբ Արևմուտքի երկրներում աշխատուժի մեծ կարիք էր զգացվում: Էթնոսփյուռքային խմբերը ներգաղթած երկրներում ձգտել են պահպանել իրենց ազգային լեզուն, ազգային մշակույթի արժեքները, ավանդույթները, բարոյական սկզբունքները, հավատը և այլ հոգևոր արժեքներ: Բնականաբար, աստիճանական կարգով գոյավորվել են նաև հակասությունները արմատական ազգերի և ձևավորվող էթնիկական խմբերի ազգային արժեքների միջև: Իրենց սոցիալական վիճակով էթնոսփյուռքային խմբերը միատարր չեն: Նույն խմբի մի մասը ունի միջին դասակարգի կարգավիճակ, իսկ խմբի ավելի մեծ մասն ունի ստորին խավի կարգավիճակ: Հետևաբար, եթե էթնոսփյուռքային խմբի միջին մասը պայքարում է բիզնեսում իր դիրքերն ամրապնդելու և իշխանական մարմիններում տեղեր գրավելու համար, ապա ստորին խավի կարգավիճակ ունեցող մասը պայքարում է աշխատատեղ ունենալու և, այսպես կոչված, հաց վաստակելու համար: Էթնոսփյուռքային խմբի երկրորդ մասի և արմատական ազգության միջև ծագող հակասությունները ակտիվ բնույթ ունեն հատկապես ժամանակակից Ռուսաստանում: Մասսայական լրատվության տվյալների համաձայն արդի Ռուսաստանում մոտ չորս միլիոն այլազգիներ են հաշվվում, որոնք գաղթել են վերջին տարիներին ԽՍՀՄ-ի կազմի նախկին, իսկ այժմ անկախ հանրապետություններից, որոնք էժան աշխատուժ են հանդիսանում Ռուսաստանի տարածքում: Սակայն ռուսական նացիոնալիզմը չի հանդուրժում այլազգիների ներգաղթը և օգտագործելով բոլոր միջոցները, դրանց թվում նաև ահաբեկչությունը, ամեն կերպ ձգտում է երկրից վտարել այլազգիներին: Դրան ի պատասխան՝ եկվորները իրենց հերթին հաճախ փորձում են միավորվել՝ դիմադրության նպատակով: Ի դեպ, 2008-ին ֆինանսական ճգնաժամի հետևանքով հարյուր հազարավոր մարդկանց աշխատանքից զրկվելու պայմաններում ռուսական իշխանությունները պաշտոնապես հայտարարեցին, որ առաջին

հերթին աշխատանքից կզրկվեն էթնոսփյուռքային խմբերը: Բնականաբար ստեղծվում է հակամարտության աստիճանի հասնող վիճակ՝ ռուսական իշխանությունների և այլազգի ներգաղթած խմբերի միջև: Էթնոքաղաքական հակամարտությունների պրակտիկան միանշանակ հաստատում է, որ այս տիպի հակամարտությունները սաստկանում և ավելի սուր բնույթ են ստանում այն դեպքում, երբ պետությունը վարում է մեկ ազգի շահերից բխող քաղաքականություն: Այսպիսի դեպքերում հակամարտությունն արտահայտվում է էթնիկական խմբի և պետության միջև: Էթնոսփյուռքային խմբերի և պետության միջև ծագող հակամարտությունները արդի ժամանակաշրջանում հաճախակի դրսևորվում են եվրոպական այնպիսի երկրներում, որտեղ երկրորդ աշխարհամարտից հետո ձևավորվել են էթնոսփյուռքային խմբեր մահմեդական աշխարհից: Այդ տարիներին քրիստոնեական Եվրոպան էժան աշխատուժի կարիք է ունեցել, ուստի հաճույքով ընդունել է հազարավոր եկվորների: Այսօր այդ խմբերը բազմացել, ձևավորվել են իբրև սոցիալական միավորներ և պետությանը առաջադրում են պահանջներ: Գերմանիայում պահանջում են ստեղծել ազգային լեզվով դպրոցներ, Շվեյցարիայում խնդիր են դնում կառուցել մզկիթներ, Բելգիայում հիմնախնդիր է համարվում Մորոկկայից գաղթած արաբական էթնոսփյուռքի խմբի ինքնավարության ստեղծումը, Ֆրանսիայում պահանջում են դպրոցներում չարգելել մուսուլմանական հավատի աշակերտուհիների գլխաշոր կրելը և այլն: Հետևաբար, եթե իրողություն է հանդիսանում էթնոսի քաղաքական ակտիվացման գործընթացը, ապա պետության գործունեության ասպարեզում հրատապ գերխնդիր է դառնում ձևավորվող էթնոքաղաքական հակամարտությունների կառավարումն ու կարգավորումը: Այսպիսով, քանի որ պետությունը յուրաքանչյուր երկրի քաղաքական համակարգի գլխավոր կառույցն է, իսկ էթնիկական հակամարտությունը բոլոր դեպքերում քաղաքական երանգ ունի, ապա յուրաքանչյուր այդպիսի հակամարտության սուբյեկտ է հանդիսանում այն դեպքում, երբ հակամարտությունը ծագում է երկու տարբեր, էթնիկական խմբերի միջև: Պետությունը անմիջական սուբյեկտ է հանդիսանում այն դեպքում, երբ հակամարտությունը ծագում է էթնիկական խմբի և պետության միջև: Ուստի կարևորվում

է պետության կողմից ավելի շատ էթնոքաղաքական հակամարտության կառավարումը, քան կարգավորումը:

Էթնոքաղաքական հակամարտության առանցքը, նրա հենման կետը հակամարտության հիմնախնդիրն է, որն իր մեջ ամփոփում է արժեքների, շահերի ու նպատակների ամբողջությունը, և որի պատճառով բախվում են կողմերի կարծիքները, գնահատումները, նպատակները: Յուրաքանչյուր կողմ միշտ ձգտում է հիմնախնդիրը լուծել իր օգտին: Հակամարտությունների հիմնախնդիրներ կարող են լինել վիճելի տարածքները, ռեսուրսների տեղաբաշխումն ու օգտագործումը, քաղաքական հարաբերությունների կարգավիճակը և այլ բնույթի գործոններ: Եթե հիմախնդիրը տարածքային վեճ է, ապա առաջանում է հարցադրում, թե ո՞րն է լեգիտիմը՝ պետության կողմից տվյալ տարածքի վրա իր իշխանության տարածումը, թե՞ տվյալ տարածքի նկատմամբ էթնիկական խմբի սուվերեն իրավունքը: Եթե լիգիտիմ է տվյալ տարածքում ապրող էթնիկական խմբի իրավունքը, և այդ իրավունքը չի ճանաչվում պետության կողմից, ապա բնականաբար ձևավորվում է հակամարտություն պետության և էթնիկական խմբի միջև:

Այսպես, օրինակ, ժամանակակից Լատվիայում պետության բարձրաստիճան չինովնիկները պաշտոնապես հայտարարում են թե, ռուսական համայքը Լատվիայում չի կարող մասնակցել լատվիական ազգային պետական համակարգի գործունեությանը: Այսինքն, լատվիական պետական էլիտան իրեն նույնացնում է ազգային պետության համակարգի հետ, արգելելով նույն երկրում ապրող էթնիկական մյուս խմբերին՝ մասնակցելու երկրի պետական-քաղաքական կյանքին: Այսպիսի պետական կառուցվածքը քաղաքագետներն անվանում են *էթնոկրատական պետություն*, իսկ այս տիպի պետության մոդելի կառուցման տեսությունը՝ *սահմանադրական նացիոնալիզմ*.[16] Էթնոքաղաքական հակամարտությունների հիմնախնդիր կարող է հանդիսանալ բազմազգ երկրների ներսում էթնիկական խմբերի ազգային մշակույթների արժեքների պահպանումը: Այսպիսի դեպքերում հատկապես սկզբունքային խնդիր է հանդիսանում էթնիկական խմբի լեզվի կարգավիճակը: Մշակութային արժեքների պահպանումը

[16] Տես՝ Ю. П. Шабаев, А. П. Садохин, Этнополитология, М., 2007г., стр. 54-55.

պայմանավորվում է ազգային լեզվի կարգավիճակով: Բազմազգ պետության ներսում յուրաքանչյուր էթնիկական խմբի կարգավիճակի որոշիչ չափանիշը տվյալ խմբի ազգային լեզվի իրավասությունն է երկրի տնտեսական ու սոցիալ-քաղաքական կյանքին մասնակցելու գործում: Այս սկզբունքը սահմանադրությամբ հաստատելով հանդերձ, Խորհրդային Միության տարիներին իրականում խախտվել է ինչպես կենտրոնական իշխանությունների, այնպես էլ հանրապետական իշխանությունների վարած ազգային քաղաքականության կողմից: Ցայտուն օրինակ է հանդիսանում այս առումով ադրբեջանական իշխանությունների վարած քաղաքականությունը Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում: Այստեղ անօրինությունը հասել է այն աստիճանի, որ ի հակադրություն նաև իր իսկ Ադրբեջանական խորհրդային հանրապետության սահմանադրության, ինքնավար մարզում գործավարությունը կայացվել է ոչ թե մայրենի լեզվով, այլ ռուսերենով, իսկ մարզի մեջ մտնող Շուշիի շրջանում, որտեղ բնակչության կեսը կազմել են ադրբեջանցիներ, գործավարությունը կատարվել է ադրբեջաներենով: Մարզում խստագույնս սահմանափակվել է հայերեն գրականության ձեռքբերումը Հայաստանից: Արգելվել է հայոց պատմության դասավանդումը հայկական դպրոցներում: Ադրբեջաներենի ուսուցումը պարտադիր է դարձել մարզի բոլոր հայկական դպրոցներում: Մինչդեռ անգամ 1921 թվականի Կովկասյան բյուրոյի տխրահռչակ որոշման մեջ շեշտվել էր, որ Լեռնային Ղարաբաղը հայ և մուսուլմանական ժողովուրդների բարեկամության ամրապնդման նպատակով թողնվում է Ադրբեջանի կազմում՝ ինքնորոշման լայն իրավասություններով:[17] Վերը նշվեց, որ էթնոքաղաքական հակամարտությունների հիմնախնդիրները բազմազան են: Այսպիսի բազմազանությամբ էլ պայմանավորվում են այդ կոնֆլիկտների կողմից մշակվող ռազմավարությունը, պայքարի միջոցների ու եղանակների օգտագործումը, առաջադրվող հիմնահարցերի տարբերություններն ու առանձնահատկությունները:

[17] Տես՝ А. Манасян, Карабахский конфликт, Ереван, 2005г., стр. 164-165.

4. ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ, ԿԱՅԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ ԵՎ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Հասարակության պատմությունը հակասությունների ծագման, զարգացման ու լուծման մշտական գործընթաց է, որի բաղկացուցիչ մասն է կազմում էթնոքաղաքական հակամարտությունը:

Այն օբյեկտիվ և սուբյեկտիվ գործոններով պայմանավորված հասարակական երևույթ է, որի ուսումնասիրությունը պահանջում է գիտական անալիզի ենթարկել հակամարտության ծագման, մարտական իրադրության ստեղծման, փուլային զարգացման և հակամարտության կարգավորման ու կառավարման գործընթացը:

Քաղաքագետները հակամարտության իրավիճակի ստեղծման գործում կարևորում են երեք հիմնական հատկանիշների ձևավորումը: Դրանք են՝

ա. սոցիալական վիճակը, որի պայմաններում հակամարտությունը հասնում է բարձր լարվածության աստիճանի,

բ. հակամարտության կողմերի հոգեբանական գործոնի ձևավորումը ,

գ. կողմերի մարտական դիրքերի ձևավորումը:

Ա. Ակլանի բնորոշումով սոցիալական հոգեբանության տեսաբանները գտնում են, որ էթնոքաղաքական հակամարտության սոցիալական գործոնը բնութագրվում է հետևյալ հիմնական պայմաններով.

ա. սոցիալական (ներկա դեպքում էթնիկական) խմբերն իրենց համարում են իբրև հակամարտության կոլեկտիվ սուբյեկտներ,

բ. հակամարտ խմբերը ներկայացնում են կոլեկտիվ պահանջ,

գ. ձևավորվում են հակադիր խմբերի նպատակներն ու գաղափարախոսությունը,

դ. քաղաքականապես միավորվում և համախմբվում են հակադիր կողմերը:[18]

Նշված պայմանների դեպքում ստեղծվում է այնպիսի իրավիճակ, երբ ցանկացած միջադեպ առաջ է բերում կողմերի լուրջ

[18] Տես՝ А. Р. Аклаев, Этнополитическая конфликтология, Москва, 2008г., стр. 275-276.

ունդիարումը: Կողմերի միջև եղած հակասությունը վերաճում է բացարձակ հակամարտության: Այն ընթանում է որոշակի փուլերով: Հանգեն փուլերի կայացման ու դրանց բաժանման կանխորոշված և ստույգ կարգ լինել չի կարող, որովհետև յուրաքանչյուր առանձին հակամարտություն դրսևորվում և ընթանում է որոշակի առանձնահատկությամբ, որը պայմանավորվում է կողմերի սոցիալական, հոգեբանական, կազմակերպման և այլ գործոններով: Սակայն հանդերձ, բոլոր հակամարտություններն ունեն նաև դրսևորման որոշակի ընդհանուր կողմեր:

Այդպիսի ընդհանրություններից են՝ կողմերի միջև հակասությունների սկզբնավորումը, կողմերի հարաբերությունների սրեցումը, հիմնահարցերի քաղաքականացումը, կողմերի բանակցությունների սպառումը: Էթնոքաղաքական հակամարտությունների բոլոր փուլերում կարգավորող ու կառավարող սուբյեկտներ են հանդիսանում պետությունը և էթնիկական խմբի էլիտար մասը: Եթե պետությունը տենդենցիոզ վերաբերմունք է ցուցաբերում էթնիկական խմբի պահանջի հանդեպ, էական նշանակություն չունեցող խոստումներ է տալիս հակամարտող կողմին և իր պաշտպանության տակ է վերցնում հակամարտության միայն մի կողմի շահը, ապա այդպիսի դեպքում պետությունը փաստորեն իր քաղաքական կեցվածքով ավելի է ուժեղացնում լարվածությունը: Ռազմավարական այդպիսի զիջ են ընտրել ադրբեջանական իշխանությունները ղարաբաղյան հակամարտության նախնական փուլում: Օգտագործելով խոստումների մեթոդը, ադրբեջանական իշխանությունները փորձել են կասեցնել ղարաբաղյան կողմի պահանջը, ինքնավարության կարգավիճակի բարձրացման, երկրամասի սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման մասին խոստումներով: Սակայն առաջարկվող «բարեփոխումների», խոստումների տակտիկան ղարաբաղցիները արդեն նախկինում ճաշակել էին: Նախորդ տարիներին ծագած հակասությունների ժամանակ նույնպես ադրբեջանական իշխանությունների կողմից տրվել են նմանատիպ խոստումներ, ընդունվել են կառավարական որոշումներ, մինչդեռ իրականում ոչինչ չի փոխվել և շարունակվել է պետականորեն ծրագրված Ղարաբաղի հայաթափման ռազմավարական քաղաքականությունը: Ուստի ադրբեջանական իշխանությունները ընտրել են նոր

ռազմավարություն, որը քաղաքագիտական գրականության մեջ անվանվում է էթնիկական տարբերությունների ապաքաղաքականացում: Ո՞րն է այս ռազմավարության իմաստը: Իրականում այն նշանակում է պետության կողմից էթնիկական հիմնախնդրի լուծում ուժի միջոցով: Այս քաղաքականությունը իրագործվում է ցեղասպանության, տեղահանման կամ էլ լավագույն դեպքում, այսպես կոչված, «էթնոսին ինքնավար մշակույթի» իրավունք տալու միջոցով՝ բացառելով երկրի քաղաքական կյանքին էթնիկական խմբի մասնակցության իրավունքը: Ընտրելով այս կարգի ռազմավարություն, ադրբեջանական իշխանությունները, իբրև նախասկիզբ կազմակերպեցին սումգայիթյան ահաբեկչությունը, այնուհետև օգտագործելով գենը, բռնի միջոցներով հայաթափեցին Ադրբեջանի հայաբնակ շրջանները և ապա լուծարելով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի պետականության ձևը, ռազմական գործողությունները տեղափոխեցին Լեռնային Ղարաբաղի տարածքը:

Ազգային քաղաքական հակամարտությունների լուծման ռազմավարության ամենադատապարտելի և մարդկային ցեղին անվայել եղանակը ցեղասպանությունն է: Հասարակության պատմության ուսումնասիրությունը վկայում է, որ ցեղասպանության մեթոդը պատմականորեն կիրառվել է հատկապես կայսրությունների կազմավորման և գաղութային քաղաքականության պայմաններում: Ցեղասպանությունը պետական իշխանությունների կողմից նախագծված և պետության կողմից լիազորված ուժային միջոցների կիրառում է, որը խնդիր է դնում էթնոքաղաքական հակամարտությունը լուծել էթնոսի ֆիզիկապես ոչնչացման եղանակով: Բնիկ ժողովուրդների ցեղասպանություններ են կատարվել աշխարհագրական մեծ հայտնագործությունների դարաշրջանում Ամերիկայում, Ավստրալիայում: Առաջին աշխարհամարտի տարիներին հայկական մեծ ցեղասպանություն է կատարվել Օսմանական Թուրքիայի երիտթուրքերի իշխանության հրամանով: Երկրորդ աշխարհամարտի տարիներին հրեական ցեղասպանություն է իրականացվել գերմանական ֆաշիզմի ռասսայական քաղաքականությամբ՝ Գերմանիայում և Եվրոպայի որոշ երկրներում, որտեղ գործում էր գերմանական ֆաշիստական ռեժիմ: 1970-90-ական թվականներին Բուրունդիում և Ռուանդայում

(Աֆրիկա) իրագործվել է *խուտու* և *տուտսի* էթնիկական խմբերի ցեղասպանությունը: Ուժի և բռնության միջոցով էթնոքաղաքական հակամարտության եղանակներից է էթնիկական խմբերի մասսայական տեղահանությունը: Այս մեթոդը կիրառվում է այնպիսի պայմաններում, երբ հակամարտող կողմերից մեկը ուժեղված լինելով իր ուժի գերակայության մեջ, հակադիր կողմին ստիպում է հեռանալ հարազատ հողից: 20-րդ դարի վերջերին այս մեթոդը կիրառվել է Շիրի Լանկայում, Աբխազիայում, Լեռնային Ղարաբաղում, Հարավային Օսեթիայում, Բոսնիայում: Թե՛ ցեղասպանության, և թե՛ մասսայական տեղահանումների պատճառով հարազատ հողից զրկված ժողովուրդների սերունդներն իրավացիորեն պահանջում են ճանաչել կատարածը, վերականգնել պատմական արդարությունը, փոխհատուցել կատարածի համար և միջազգայնորեն դատապարտել երևույթը:

Էթնոքաղաքական կոնֆլիկտների կանխման ռազմավարական բավականին տարածում գտած եղանակներից է միաձուլման մեթոդը, այսինքն՝ փոքր էթնիկական խմբեր որոշակի ժամանակի ընթացքում աստիճանաբար միաձուլվում են որոշակի տարածքում բնակվող այսպես կոչված բնիկ էթնոսի հետ: Բնիկ ազգ հասկացությունը օգտագործվում է այնպիսի ազգերի նկատմամբ, որոնց անունով կոչվում է տվյալ տարածքում կազմավորված պետությունը: Այսպես, չնայած թուրքական ժամանակակից պետությունը կազմավորվել է բյուզանդական, հայկական և հունական էթնոսների պատմական տարածքներում, այդ ժողովուրդներին բռնությամբ տեղահանելու միջոցով, այնուամենայնիվ ներկայումս այն կոչվում է Թյուրքիա, իսկ Թյուրքիայում ապրող թուրքերը՝ բնիկ ազգ: Այժմյա Ռուսաստանի Դաշնությունում բնիկ ազգ է կոչվում ռուսական ազգը: Դեռ ավելին, չնայած Ռուսաստանի Դաշնության տարածքի մեծ մասում ապրում են ոչ ռուս, այլազգի ժողովուրդներ, բայց իշխանական համակարգում աստիճանաբար ավելի շատ գործածական է դառնում Ռուսաստան տերմինը, քան Ռուսաստանյան Դաշնությունը: Փոքր էթնիկական խմբի միաձուլումը կատարվում է երկու ուղիներով: Մի դեպքում այն կատարվում է համարյա աննկատ, "կամավոր կամքով", այսինքն՝ փոքր խմբերը աստիճանաբար հրաժեշտ են տալիս իրենց մայրենի լեզվին, մշակույթի արժեքներին, ավանդույթներին և ավելի հեշտ կյանք վարելու նպատակով ձուլվում

են մեծ ազգի հետ: Երկրորդ ուղին ավելի շատ կապված է պետության պաշտոնական քաղաքականության հետ: Պետությունը ձեռնարկում է օրենքով սահմանված միջոցներ միաձուլման նպատակով: Այդպիսի միջոցներից են հանդիսանում ազգային լեզվով դպրոցների փակումը, կառավարման մարմիններում այլազգի մարդկանց մուտքի արգելակումը, միասնական տոների սահմանումը և այլն:

Միաձուլման պետական քաղաքականության մեջ միաժամանակ օգտագործվում են նաև հարմարվողական միջոցներ, այսինքն՝ օրենքով չի արգելվում էթնիկական խմբերին կառուցելու ինքնատիպ ապրելակերպ, չեն սահմանափակվում էթնիկական խմբերի իրավունքները տնտեսական գործունեության ասպարեզում: Միաձուլման պետական ավելի ռադիկալ-ավտորիտար քաղաքականությունը էթնիկական խմբերի նկատմամբ առկա է Թուրքիայում և Մերձբալթյան հանրապետություններում, իսկ նույն քաղաքականության լիբերալ դրսևորումը առկա է ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Իտալիայում և Արևմուտքի այլ երկրներում: Արևմուտքի շատ երկրներում, ինչպես նաև Ռուսաստանի Դաշնությունում ազգային քաղաքականության ասպարեզում ձևավորվող էթնոքաղաքական հակասությունների կանխման եղանակների համակարգում բավականին լայն տարածում է ստացել, այսպես կոչված, «մուլտիկուլտուրիզմի» մեթոդը: Այս մեթոդը քաղաքագետների մոտ հաճախ հռչակվում է որպես էթնիկական խմբերի և արմատական ազգերի քաղաքական ինտեգրացման միջոց:

Էթնոքաղաքական հակամարտությունների կանխման այս եղանակի իմաստն արտահայտվում է պետության կողմից փոքր էթնիկական խմբերի լեզվի, մշակույթի, ապրելակերպի, ավանդույթների պահպանման համար օրենքով սահմանված իրավունքների օգտագործման մեջ: Դա նշանակում է, որ պետությունը իրավաբանորեն ճանաչում է երկրում ապրող էթնիկական խմբերի մշակույթի, լեզվի, հավատի, ավանդույթների իրավացիությունը և օրենքով պաշտպանում է էթնիկական արժեքների անձեռնմխելիությունը:

Այսպես, օրինակ, լրատվական տվյալների համաձայն 2003 թվականին Ռուսաստանում գրանցվել են 300-ից ավելի տարածաշրջանային և տեղական կուլտուր-ազգային

ինքնավարություններ և մի քանի հազար կուլտուր-ազգային միություններ: Միայն Սանկտ-Պետերբուրգում գործում են 12 կուլտուր-ազգային ինքնավարություններ և մատ 200 կուլտուր-ազգային միություններ:[19] Նշված տվյալները վկայում են, որ Ռուսաստանի Դաշնության իշխանությունների ուշադրության կենտրոնում է գտնվում բազմազգ երկրի էթնիկական խմբերի բարեկամական հարաբերությունների և խաղաղ գոյակցության հիմնահարցերը: Սակայն անժխտելի է նաև այն փաստը, որ առայժմ չափազանց թարմ են նաև մեծապետական շովինիզմի ծիլերը քաղաքական որոշ կառույցներում, որի հետևանքը ահաբեկչությունների դեպքերն են ազգային պատկանելիության հողի վրա և քաղաքական համակարգի կառույցներում ռուս ազգի բացարձակ իշխանության դրսևորումը: Այս կարծիքի անժխտելիության վառ օրինակներ են հանդիսանում 2010 թվականի դեկտեմբերին Մոսկվայում, Կրեմլի ամենամոտ հրապարակներից մեկում՝ Մանեժում, Պետերբուրգում և Ռուսաստանի մի քանի այլ քաղաքաների հրապարակներում կատարված ահաբեկչություններն ու անկարգությունները, որոնք ցնցեցին ողջ Ռուսաստանը և անակնկալի բերեցին ռուսական իշխանություններին, ամենից շատ՝ նախագահ Մեդվեդևին: Դեկտեմբերի 11-ին Մանեժի հրապարակում ֆուտբոլի երկրպագուների ընդհարման ժամանակ սպանվեց ազգությամբ ռուս մի երիտասարդ: Սպանությունը կատարվել էր Ռուսաստանի քաղաքացու՝ Հյուսիսային Կովկասից ազգությամբ ոչ ռուս երիտասարդի կողմից: Այս դեպքը լրատվության միջոցները կայծակի արագությամբ տարածվեցին ողջ Ռուսաստանում: Ամենուր կազմակերպվեցին ցույցեր, հավաքներ՝ "Ռուսաստանը ռուսներին", "Մոսկվան ռուսական քաղաք է" լոզունգներով; ծաղիկների հսկայական գունդ գոյացավ ռուս երիտասարդի սպանության վայրում, ծաղկեփնջով այստեղ եկավ նաև վարչապետ Պուտինը: Պաշտոնական տվյալների համաձայն երեսունից ավելի այլազգի մարդիկ ահաբեկչության զոհ դարձան երկու օրվա ընթացքում: Այս ամենը ռուսական շովինիզմի իրական ու փաստացի արտահայտությունն էր: Էթնիկ հակամարտությունների պրակտիկան ցույց է տալիս, որ «մուլտիկուլտուրիզմի» մեթոդը, որը

[19] Տես՝ Национальная политика России на рубеже 20-21 веков, Санкт-Петербург, 2005г., стр. 22.

օգտագործվում է քաղաքական ինտեգրացման եղանակով մարել էթնիկական հակասությունները, որոշ արդյունքի են հասնում այնպիսի դեպքերում, երբ էթնիկական խմբերը ինքնորոշման պայմանը ոչ մի խոստումներով չեն փոխարինում: Եթե եվրոպական երկրներում հայկական էթնոսը փաստորեն բավարարվում է պետության կողմից հայկական համայնքին տրված իրավունքներով, ապա Ղարաբաղի հայությունը երբեք չի կարող համաձայնվել լինել Ադրբեջանի կազմում, անկախ այն բանից, թե ինչպիսի իրավունքներ կարող են խոստանալ Ադրբեջանի իշխանություններն ու միջազգային կառույցները: Մինչդեռ Վրաստանի տարածքում ապրող հայերը հնարավոր է, որ միակարծիք չլինեն քաղաքական ինտեգրացման քաղաքականության կիրառման մեջ: Եթե Թբիլիսիում ապրող հայկական էթնիկական խումբը կհամաձայնվի քաղաքական ինտեգրացման պայմանին, ապա Ջավախքի հայությունը, որտեղ դարերով ապրել են իրենց նախնիները, կգերադասեն ունենալ գոնե ինքնավարության իրավունք, եթե չասենք ինքնորոշման իրավունք:

Էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման ռազմավարության գործընթացում օգտագործվում է նաև տերիտորիալ բաժանման եղանակը: Իմաստն այն է, որ հակամարտող կողմերը կազմավորվում են միմյանցից կախում չունեցող, սահմանազծված տարածքներով սուվերեն ազգային պետություններ: Անկախություն նվաճած պետությունները կարող են լինել միջազգային ճանաչում ունեցող, մեկ կամ մի քանի պետությունների կողմից ճանաչված, ինչպես նաև չճանաչված: Նորվեգիայի անջատումը Շվեդիայից, Բանգլադեշի անջատումը Պակիստանից, Սլովակիայի անջատումը Չեխիայից, ԽՍՀՄ-ի քայքայման հետևանքով կազմավորված նորանկախ հանրապետությունները ստեղծվել են փոխադարձ համաձայնությամբ, առանց ուժի օգտագործման և անդամագրվել են միջազգային կազմակերպություններին՝ իբրև առանձին սուբյեկտներ: Մինչդեռ Կոսովոն, Աբխազիան, Հարավային Օսեթիան մասնակի ճանաչում ունեցող նոր պետություններ են, իսկ Լեռնային Ղարաբաղի հանրապետությունը առայսօր, այսպես կոչված, չճանաչված նորանկախ պետություն է: Ուսումնասիրությունները հաստատում են, որ ինքնորոշման համար պայքարի ընթացքում

երկկողմանի համաձայնությամբ հիմնախնդրի լուծումը կատարվում է հազվադեպ: Ինքնորոշման համար էթնոքաղաքական հակամարտությունը հիմնականում կրում է շարունակական բնույթ և հաճախ սպառնալիքներն ու ուժային գործողությունները տևում են բազում տարիներ: Շարունակական ուժային հակամարտություններից չեն կարող շահել հակմարտող կողմերը: Պատերազմական գործողությունները հակամարտող էթնիկական խմբերին կարող են բերել միայն արհավիրքներ: Դրա իրական վկայություններն են հանդիսանում թեկուզ իսրայելա-արաբական և վրաց-աբխազական, Հարավ-Օսեթական հակամարտությունների ընթացքը: Միջազգային պրակտիկան միանշանակ հաստատում է, որ տերիտորիալ հիմնահարցերի պատճառով ծագած էթնոքաղաքական կոնֆլիկտների կարգավորումը բանակցությունների միջոցով, համարյա անհնարին է: Այդ տիպի կոնֆլիկտների բացարձակ մասի արդյունքում ձևավորվում են չճանաչված կամ մասնակի ճանաչված անկախ պետություններ, որոնք երկար տարիներով ապրում են ստատուս քվո կարգավիճակով: Այսինքն երկարատև, առանց որևէ ժամկետի պաշտպանում են իրենց անկախությունը և չեն էլ ենթադրում մտաբերել նախկին կարգավիճակ վերադառնալու մասին որևէ հարց: Թերևս աշխարհում չկա օրինակ, որի դեպքում պայքարով անկախություն նվաճած ժողովուրդը բանակցելու եղանակով, կամավոր կերպով վերադառնար կախյալ, կամ կիսանկախ կարգավիճակի: Մինչդեռ ստատուս քվո առանձնավիճակով տասնյակ տարիներով ապրում են մի շարք փաստացի անկախ պետություններ: Այդպիսի պետություններից են Հյուսիսային Կիպրոսը, Մերձդնեստրովիան, Էրիտրեյան (Կարմիր ծովի ափին), Աբխազիան, Հարավային Օսեթիան: Նույնատիպ կարգավիճակ ունի նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը, որը նշեց իր անկախության հռչակման 20-ամյակը:

Էթնոքաղաքական կոնֆլիկտների ծագումն ու հետագա ընթացքը դինամիկ գործընթաց է և կայանում է կոնֆլիկտային իրադրության ստեղծման, դեպքերի զարգացման, լարվածության թուլացման, կոնֆլիկտների մարման և հաշտության փուլերով: Այդ փուլերից յուրաքանչյուրն իր հերթին բաժանվում է ենթափուլերի: Վերը մենք հակիրճ վերլուծել ենք կոնֆլիկտային լարվածության նմանատիպ իրավիճակի ստեղծման գործընթացը: Փորձենք

ներկայացնել էթնոքաղաքական կոնֆլիկտերի ծավալման փուլային շարժընթացը: Ի դեպ, նշենք, որ էթնոքաղաքական կոնֆլիկտների ծավալման ու կարգավորման մեխանիզմներն ու փուլերը բազմակողմանիորեն մեկնաբանվում են Ա. Ակլաևի գրած մենագրավալ "Էթնոքաղաքական հակամարտություններ" ձեռնարկում: Այստեղ հեղինակը կոնֆլիկտների ծավալման փուլը բաժանում է 9 ենթափուլերի

1. կոնֆլիկտների առաջացման քողարկված փուլ,
2. հոգեբանական դժգոհության առաջացման փուլ,
3. կողմերի լարվածության ստեղծման փուլ,
4. կոնֆլիկտների ճգնաժամային փուլ,
5. դիսկուսիոն փուլ,
6. բևեռեցման փուլ,
7. կողմերի ամբողջությամբ անջատման և միմյանցից մեկուսացման փուլ,
8. հակադրության առաջացման փուլ,
9. կոնֆլիկտի վերջնական արմատավորման փուլ:[20]

Համաձայնելով ենթափուլերի այսպիսի դասակարգման հետ, միաժամանակ ընդգծենք, որ վերը շարադրված դասակարգումը հազիվ թե օրինաչափորեն տարածվի էթնոքաղաքական հակամարտությունների բոլոր տիպի դրսևորումների վրա: Ներկայումս աշխարհում հաշվում են մոտ 500 էթնոքաղաքական հակամարտությունների օջախներ, որոնք տարբերվում են իրենց մակարդակով, չափերով, պատճառներով ու պահանջներով: Իսկ եթե վերոհիշյալ դասակարգումը դիտարկենք ղարաբաղյան հակամարտության տեսանկյունով, ապա կարելի է ասել, որ ղարաբաղյան հակամարտության ծավալման ենթափուլեր են հանդիսանում 20 թվականներին հիմնահարցի բռնադատման հետ կապված արցախհայության ըմբոստացուը, պարբերաբար ճգնաժամային իրավիճակների ստեղծումը, կողմերի բևեռացումը և արմատական հակամարտության ձևավորումը: Այստեղ մենք չենք ծավալվում կոնֆլիկտների ձևավորման ու կայացման փուլերի հանգամանալից մեկնաբանման մեջ, հաշվի առնելով հատկապես

[20] Տես՝ А. Р. Аклаев, Этнополитическая конфликтология, М., 2008г., стр. 274-290.

այն, որ դարաբաղյան կոնֆլիկտին վերաբերող այդ հիմնահարցը վերլուծված է հրապարակի վրա եղած գրականության մեջ:

Էթնոքաղաքական կոնֆլիկտների մեկնաբանման հրատապ խնդիրներից է հանդիսանում դրանց կառավարման ու կարգավորման հիմնահարցի ուսումնասիրությունն ու գնահատումը: Ամենից առաջ անհրաժեշտ է միմյանցից տարբերակել *կառավարում* և *կարգավորում* հասկացությունների իմաստը: Կառավարումը իմաստային առումով ավելի նեղ ընդգրկում ունի, քան կարգավորումը: *Կառավարում* հասկացությունը արտահայտում է պետության և կողմերի էլիտար խմբերի պրակտիկ գործունեությունը՝ ձևավորվող կոնֆլիկտը կանխելու, կամ էլ նրա ընդլայնումն ու բևեռացումը մարելու նպատակով: Մինչդեռ կարգավորումը ավելի լայնիմաստ հասկացություն է: Այն ընդգրկում է ոչ միայն արդեն կայացած, այլև բանակցությունների գործընթացը, երրորդ ուժի միջամտությունները, կողմերի դիրքերի սկզբունքային վերլուծությունները և այլ հարցեր: Հետևաբար, կոնֆլիկտի կարգավորումը կարելի է համարել միջոցառումների այն ամբողջությունը, որի օգնությամբ սառեցվում է կոնֆլիկտի խորացումը, ստեղծվում են հնարավորություններ՝ մոտեցնելու կողմերի սկզբունքային դիրքորոշումները՝ կոնֆլիկտը խաղաղ ելքով լուծելու համար: Կարգավորումը դեռևս կոնֆլիկտի լուծում չէ: Կարգավորման դերն ու նշանակությունը արտահայտվում է կոնֆլիկտային վիճակի ծայրաստիճան սրումը կասեցնելու մեջ: Կարգավորման գործընթացը առկա է նաև կոնֆլիկտի ժամանակավոր սառեցման և զինադադարի կանոնների պահպանման պայմաններում: Ղարաբաղյան կոնֆլիկտի դեպքում կարգավորման ներկա գործընթացը պայմանավորվում է կողմերի կառուցողական ու ողջամիտ կեցվածքով: Կարգավորումն այստեղ կառուցողական բնույթ կունենա այն դեպքում, երբ փոխզիջումներից առաջ որոշվի ԼՂՀ-ի քաղաքական կարգավիճակը: Ղարաբաղյան կողմը այն համոզմունքին է, որ երկու տասնյակ տարիների անկախության և սեփական ազգային պետականության կառուցումից հետո պատրանք կլինի վերադարձը օտարի իշխանության պայմաններին: Ուստի բնականաբար անհրաժեշտություն է դառնում ղարաբաղյան կողմի լիիրավ մասնակցությունը կարգավորման գործընթացին: Շրջափակումն ու իրավական արգելքների ստեղծումը

Լեռնային Ղարաբաղի ժողովուրդին մեկուսացրել են արտաքին աշխարհից: Հետևաբար, այս կոնֆլիկտի կարգավորման գործընթացում ղարաբաղյան կողմի նպատակային գերխնդիրը սկզբնավորվում է ղարաբաղի բնակչության անվտանգության ապահովման կայուն երաշխիքով և արտերկրի հետ ազատ հարաբերությունների կառուցման իրավունքով:

Արդի ժամանակաշրջանում էթնոքաղաքական կոնֆլիկտների կառավարման ու կարգավորման գործում կարևորելով միջազգային ինտեգրացման, գերտերությունների խմբավորումների ձևավորման, շահերի տարանջատման իրական գործընթացը, միաժամանակ անհերքելի իրողություն է նաև այն, որ նույն գործընթացի հետևանք է հանդիսանում նաև էթնիկ հանրությունների պայքարը ազգային լեզվի ու մշակույթի պահպանման, ինքնավարության կարգավիճակի բարձրացման, քաղաքական անկախության հաստատման համար: Պայքարի ճանապարհին սեղծվում են տարբեր ուղիներ ու հնարավորություններ: Ուստի բացառվում են կոնֆլիկտների լուծման միօրինակ ռազմավարությունը, կարգավորման միջոցներն ու եղանակները:

5. ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽԱՂԱՂ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերը ընդգծվել է, որ 21-րդ դարի սկիզբը նշանավորվում է սոցիալական հակամարտությունների առատությամբ, և եթե մարդկությունը չգտնի կանխարգելիք միջոցներ, ապա ստեղծված իրավիճակը կարող է բերել ինչպես քաղաքակրթությունների բախում, այնպես էլ ազգամիջյան հարաբերությունների քաոսային վիճակ: Հետևաբար, միանգամայն բնական է, որ ՄԱԿ-ի և միջազգային այլ կազմակերպությունների գործունեության ընդհանուր համակարգում ամենահրատապ հիմնախնդիրներից մեկը էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ ելքով կարգավորումն է: Քաղաքական- վիճակագրական ուսումնասիրությունների համաձայն աշխարհում զինված ուժերի գործադրումով 1989-96 թվականների ժամանակահատվածում գրանցվել են 101 էթնոքաղաքական հակամարտություններ, որոնցից

66-ը կարգավորվել են նույն ժամանակահատվածում: 66-ից 19-ի դեպքերում ձեռք են բերվել փոխադարձ համաձայնություն, 23-ի դեպքերում բացարձակ հաղթանակ է նվաճել կողմերից մեկը, 24-ի դեպքում հակամարտությունը սառեցվել է կողմերի համաձայնությամբ, առանց պաշտոնական պայմանագրի կնքման:[21] Ի դեպ, նշված 24 դեպքերին է պատկանում նաև ղարաբաղ-ադրբեջանական հակամարտությունը: Ա. Ռ. Ակլաևը ադրբեջան-ղարաբաղյան կոնֆլիկտը բնութագրում է իբրև կողմերից ոչ մեկի բացարձակ հաղթանակ մյուսի մկատմամբ, պարզապես այնպիսի իրավիճակ, երբ կողմերը համաձայնվում են մարել կրակը, ընդհանուր համաձայնության չգալով հանդերձ: Այստեղ բացառվում է խաղաղության գործոնը, քանի որ կողմերը չեն կարողանում գալ ընդհանուր համաձայնության:[22] Ըստ երևույթին հեղինակը ղարաբաղյան կողմի իրական հաղթանակը բացարձակ չի համարում այն առումով, որ այն միջազգային ճանաչում չի ստացել և ԼՂՀ-ն առայսօր համարվում է չճանաչված, ինքնահռչակ պետություն: Սակայն այստեղ նույնպես անհասկանալի է, թե մի ժողովուրդ, որը պայքարով ու զոհերի արյունով իր քաղաքական անկախությունն է նվաճել, ինչու՞ չի կարող բացարձակ հաղթանակի տեր լինել: Հակամարտությունների կարգավորման գործընթացը միանշանակ հաստատում է, որ խաղաղ ելքով դրանց լուծումը ընթանում է չափազանց լուրջ դժվարություններով: Այդ դժվարությունները պայմանավորվում են սոցիալ-քաղաքական և հոգեբանական հիմնապատճառներով: Հակամարտությունների կարգավորման խոչընդոտող սոցիալական բնույթի ամենաազդեցիկ պատճառներից մեկն այն է, որ հակամարտությունը դրսևորում է ոչ թե առանձին անհատների կամ էլիտար խմբերի միջև, այլ էթնոսների միջև: Հակամարտության սուբյեկտներ են հանդիսանում էթնոսները: Հակամարտության կարգավորումը առավել ևս դժվարանում է, երբ մասսաների գիտակցության մեջ հիմնավորվում է պոտենցիալ թշնամու դեմ անզիջում պայքարի գաղափարը: Ժամանակակից Ադրբեջանի տարածքում բնակվող ադրբեջանցիների 90%-ից ավելին միանշանակ հայտարարում է, որ ազգությամբ հայ մարդը, հասարակական որ-դասին էլ նա պատկանա, որ երկրում էլ ապրելիս

[21] Տես՝ А. Р. Аклаев նշվ. աշխ., стр. 370:
[22] Տես՝ նույն տեղը, էջ 370:

լինի, միևնույն է, ադրբեջանական ազգի ոխերիմ թշնամին է: Այսպիսի համոզմունքը ադրբեջանցու գիտակցության մեջ է մտցրել ադրբեջանական պաշտոնական ազգային ժամանակակից գաղափարախոսությունը: Տիպական է հետևյալ օրինակը: 2007 թվականին թուրքական մի նվագախումբ մեկնել է Բաքու: Ինքնաթիռի վայրէջքի ժամանակ Բաքվի օդանավակայանում հայտնի է դառնում, որ նվագախմբի կոլեկտիվում մի հայ կա: Արգելվում է հայ երաժշտի ինքնաթիռից իջնելը և ետ ուղևորվում է Թյուրքիա: Այսքանից հետո օրինական հարց է առաջանում, թե այն իշխանությունը, որը իր ազգին հրմցրել է ոխերիմ թշնամանքի հոգեկան զգացմունք հայ մարդու նկատմամբ, ինչպես կարող է համոզել աշխարհին, որ հնարավոր է Ղարաբաղի հայության անվտանգության ու խաղաղ կյանքի ապահովումը Ադրբեջանի կազմում: Թերթելով պատմության էջերը, մենք գալիս ենք այն եզրահանգմանը, որ մեծ տերությունները նույնպես չեն կարող երաշխավոր լինել Ղարաբաղի հայության անվտանգության ապահովման համար, եթե հանկարծ հրաշքով Ղարաբաղը հայտնվեր Ադրբեջանական հանրապետության կազմում: Այս առումով Ա. Մանասյանը իրավացիորեն նկատում է. «Հայկական կողմերը բոլոր հիմքերն ունեն պնդելու, որ հավատ չեն կարող տածել միջազգային երաշխիքների ու միջազգային կազմակերպությունների խոստումների հանդեպ: Առաջին աշխարհամարտից հետո ցեղասպան Թուրքիային պատժելու փոխարեն խոշոր տերությունները Արևմտյան Հայաստանը որպես պարգևատրություն հանձնեցին նրան: Այսօր ադրբեջանահայության նկատմամբ գործած եղեռնից հետո Թուրքիայի կողմից հիմնված այդ պետությունը ոչ միայն չի պատժվում, այլև փորձեր են կատարվում որպես պարգև, նրա ենթակայությանը հանձնել Լեռնային Ղարաբաղը»:[23] Էթնոքաղաքական հակամարտությունները խաղաղ ելքով կարգավորելու դժվարության հիմնապատճառ կարող է հանդիսանալ երկու կողմերում իշխանությունների ընդդիմադիր ուժերի կեցվածքը: Իշխանությունների կողմից ապագա փոխադարձ համաձայնությանը վերաբերող յուրաքանչյուր քայլ, յուրաքանչյուր միտում ընդդիմությունը համարում է որպես նահանջ՝ սկզբունքային

[23] Տես՝ Ա. Մանասյան, Ղարաբաղյան հիմնախնդիր, փաստարկներ և փաստաթղթեր, Եր., 2005թ., էջ 23-24:

դիրքերից, որպես ազգային շահերի անտեսում: Այսպես, օրինակ, 2008թ. նոյեմբերին Մոսկվայում դարաբաղա-ադրբեջանական հակամարտությունը խաղաղ ելքով կարգավորելու մասին Ռուսաստանի Դաշնության, Հայաստանի և Ադրբեջանի նախագահների ստորագրությամբ կայացած հռչակագիրը Ադրբեջանի Եհի Մուսաֆաթ կուսակցության լիդերները անմիջապես այն անվանեցին որպես Ադրբեջանի նախագահ Ի. Ալիևի կողմից Ադրբեջանի ազգային շահերի անտեսում, ադրբեջանական կողմի դիրքերի զիջում: Հակամարտությունների խաղաղ կարգավորման գործընթացի լրջագույն խոչընդոտներից է հանդիսանում ժամանակավորապես ռազմական գործողությունները դադարեցնելու, այսինքն զինված ընդհարումները սառեցնելու մասին համաձայնագիրը ստորագրելուց հետո հակամարտող կողմերի լիդերների կողմից ձեռնարկվող ռազմական լայնամասշտաբ պատրաստվածությունը: Այս գործընթացին նպաստում և աջակցում են նաև երրորդ կողմերը, այն պետությունները, որոնց շահերը համընկնում են հակամարտող մի կողմի շահերին: Այսպես, վրաց-օսեթական և վրաց-աբխազական հակամարտության գործընթացում ԱՄՆ-ն և Ուկրաինան զգալիորեն նպաստեցին վրացական ռազմական ուժերի հզորացմանը, որը փաստորեն պայմանավորվում էր Վրաստանի իշխանությունների հակառուսական քաղաքական ռազմավարությամբ: Այսպիսի ռազմավարությունը միավորում էր Վրաստանի, ԱՄՆ-ի և Ուկրաինայի արտաքին քաղաքականության շահերը: Այս առումով դարաբաղա-ադրբեջանական հակամարտության գործընթացում ադրբեջանական կողմին ռազմական աջակցություն է ցույց տալիս Թուրքիան: Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացին խոչընդոտում է հատկապես Ադրբեջանի ռազմատենչ դիրքորոշումը: Այս երկրի նախագահը առիթը բաց չի թողնում հնարավոր բոլոր պայմաններում հայտարարելու, որ Ադրբեջանը ի վիճակի է իր ռազմական ուժերին հատկացնել նույնքան ֆինանսական միջոցներ, որքան Հայաստանի պետական բյուջեն է: Ընդգծելով էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ ելքով կարգավորելու գործընթացում դրսևորվող մի քանի խոչընդոտների մասին, միաժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել այն փաստը, որ արդի

ժամանակաշրջանում առավել ևս անպատկերացնելի է ուժի միջոցով այս տիպի հակամարտությունների կարգավորումը: Այդ են վկայում թեկուզ 2008 թվականի օգոստոսին Վրաստանի կողմից ձեռնարկված ռազմական ակտը օսեթական և աբխազական հիմնահարցերը լուծելու նպատակով և Իսրայելի ձեռնարկած պատերազմը Գազայի հիմնահարցը լուծելու նպատակով: Հետևաբար, եզրահանգումը մեկն է՝ գերխնդիր է դառնում բոլոր հնարավորությունների ու միջոցների օգտագործումով հակամարտությունների կարգավորումը խաղաղ ելքով: Որքան էլ դժվարին լինի այդպիսի գործընթացը, միևնույն է, արդյունքում կշահեն հակամարտող կողմերը:

Քաղաքագետների մեծ մասի կարծիքով էթնոքաղաքական հակամարտությունների կարգավորման համար նախ անհրաժեշտ է ճիշտ կազմակերպել հակամարտության կառավարումը: Այստեղ հաշվեկշռված դեղատոմսեր չեն կարող լինել, քանի որ էթնիկական բնույթի հակամարտությունները նշանավորվում են տարբեր նպատակային հիմնախնդիրներով ու դրսևորման եղանակներով: Հակամարտության կառավարում ասելով հասկացվում է հնարավորությունների և միջոցառումների ամբողջության օգտագործումը՝ հակամարտությունը ատիճանաբար կասեցնելու և կողմերի աստիճանական մոտեցումը բանակցությունների գործընթացը շարունակելու նպատակով: Վ. Ա. Աչկասովայի և Վ. Ա. Գուտորովայի խմբագրությամբ Սանկտ-Պետերբուրգի համալսարանի կողմից հրատարակված քաղաքագիտության ձեռնարկում հակամարտության կառավարման գործընթացի համար առաջարկվում են հետևյալ միջոցների օգտագործումը՝

- հակամարտության կողմերի շահերի ու հետագա քայլերի ձեռնարկման մասին օպերատիվ լրատվական հստակություն,
- փոխադարձ գիտակցական կողմնորոշվածությունը՝ ուժ չօգտագործելու մասին,
- կողմերի փոխադարձ հայտարարությունը՝ հակամարտությունը տվյալ ժամանակահատվածում սառեցնելու ու չսրելու մասին,
- հակամարտության կառավարման գործընթացին մասնակից դարձնել անշահախնդիր երրորդ կողմի, որի առաջարկությունը կնպաստի փոխադարձ համաձայնությանը,
- նոր իրավական նորմերի օգտագործումը, որը կնպաստի կողմերի դիրքորոշումների մերձեցմանը,

- գործնական մթնոլորտի ստեղծում և վստահության հարաբերությունների կառուցում հակամարտության վերջնական լուծման նպատակով:[24]

Կոնֆլիկտոլոգիական գրականության մեջ ներկայացվում են էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ ելքով կարգավորման ռազմավարական մի քանի տարբերակներ: Ըստ որում, տարբերակվում են կարգավորման խաղաղ գործընթացի երկու տիպի ձեռքբերումներ՝ նեգատիվ խաղաղություն և կայուն խաղաղություն: Նեգատիվ է կոչվում այն տարբերակը, որի դեպքում համաձայնություն է ձեռքբերվում դադարեցնել ուժի օգտագործումը, զինադադարի հայտարարումը: Այսպիսի դեպքերում կարող են կիրառվել ՄԱԿ-ի կամ միջազգային այլ կազմակերպությունների հովանավորությամբ խաղաղապահ ուժեր՝ օգտագործել զինադադարը վերահսկելու նպատակով: Կայուն ձեռքբերում է համարվում այն, երբ հակամարտող կողմերը պաշտոնապես պայմանագրային փաստաթուղթ են ստորագրում հակամարտության ավարտի և նորմալ հարաբերությունների կառուցման մասին: Հակամարտության խաղաղ ելքով կարգավորման ռազմավարական տարբերակներից մեկը բազմազգ պետության ներսում ներքին վերափոխումների մեթոդի կիրառումն է: Այս մեթոդի կիրառման դեպքում հակամարտության ձևավորման ու կայացման հիմնապատճառ է համարվում մեղավորը կամ մեղավորների խումբը, այսինքն՝ մեղքը բարդվում է սահմանափակ թվով մարդկանց վրա: Մոտավորապես նույնպիսի ռազմավարական մեթոդով կարգավորվեց ռուս-չեչենական հակամարտությունը: Այստեղ վերջին հաշվով մեղքը բարդվեց չեչեն ահաբեկիչների լիդերների վրա, ձեռնարկվեց հանրաքվեի նախապատրաստումն ու անցկացումը, որի ընթացքում չեչեն էթնոսի 90 տոկոսից ավելին քվեարկեց Ռուսաստանի Դաշնության մեջ մնալու օգտին: Հակամարտության խաղաղ կարգավորման ռազմավարական եղանակներից է համարվում հակամարտության կողմերի փոխադարձ համաձայնությունը նույն պետության ներսում էթնիկական խմբի ինքնավարության և միասնական պետության լեգիտիմության ճանաչումը: Սովորաբար էթնիկական ավելի փոքր

[24] Տես՝ Политология: под ред. В. А. Ачкасова, В. А. Гуторова, М., 2008г., стр. 567.

խմբերի և այսպես կոչված բնիկ էթնոսի միջև ծագող հակամարտությունների հիմնապատճառ է հանդիսանում փոքր խմբի ձգտումները էթնիկական մշակույթի արժեքների և ավանդույթների պահպանման համար: Այսպիսի դեպքերում ավելի շատ՝ գործադրում են միջմշակութային երկխոսության ռազմավարական եղանակը:

Հակամարտող կողմերը ձեռք են բերում փոխադարձ համաձայնություն և հանդուրժողականություն՝ նույն պետության ներսում մշակութային տարբեր արժեքների պահպանման, կայացման ու զարգացման գործում: Ասպարեզից վերանում է այն հարցը, թե որ էթնոսի մշակույթն է ավելի լավ և ընդունելի: Մշակութային բոլոր արժեքները ստանում են լեգիտիմ կարգավիճակ: Չնայած քաղաքագետների զգալի մասը հակված է այն գաղափարին, որ էթնոքաղաքական հակամարտությունների խաղաղ կարգավորման ամենահուսալի եղանակը էթնիկական խմբերի ինքնավար մշակութային կյանքի ապահովումն է, այնուհանդերձ պրակտիկան ցույց է տալիս, որ բոլոր դեպքերում չէ, որ մշակութային արժեքների պահպանումը և կուլտուր-ազգային ինքնավարության հաստատումը կարող է բացառել հակամարտության հետագա սրումը: Ոստի արտահայտվում է նաև այն կարծիքը (հատկապես էթնիկական փոքր խմբերի կարծիքով), որ կուլտուր ազգային ինքնավարության եղանակը հորինված է մեծ ազգերի շահերն արտահայտող գաղափարախոսների կողմից՝ փոքր ազգերին հեշտությամբ տիրապետելու նպատակով: Ավտորիտար և տոտալիտար ռեժիմների պայմաններում էթնոքաղաքական հակասությունների կարգավորման հիմնահարցերը իշխանությունների կողմից մատնվում են անտարբերության: Ավտորիտարիզմի պայմաններում այդպիսի հակասությունները մնում են ստվերի տակ: Սակայն ռեժիմի փոփոխության պայմաններում նույն հակասություններն անմիջապես հայտնվում են քաղաքական կյանքի ոլորտներում:

Էթնոքաղաքական հակամարտության ախտանիշը (սինդրոմը) բավականին ուժեղ և զգացմունքային է և արագությամբ է թափանցում մասսաների գիտակցության մեջ: Ազգային թշնամանքը կարող է պահպանվել մի քանի սերունդների կյանքում: Նույն կոնֆլիկտը կարող է "արթնանալ", եթե դրա համար ստեղծվել են

առիթներ: Ուստի դժվար է այդ ախտանիշի անջատումը մարդկանց գիտակցությունից: Բացի այդ, պետք է հաշվի առնել նաև այն, որ երբ կոնֆլիկտը վերածվում է զինված ընդհարումների, պատերազմների, ապա մարդկանց մի մասի համար կոնֆլիկտի շարունակությունն ու ավելի խորացումը դառնում են նյութական արժեքներ կուտակելու միջոցներ: Ուժի օգնությամբ նյութական արժեքների ձեռքբերման հոգեբանական միտումը մարդկանց մղում է նոր գործողությունների: Իսկ երբ այսքանին զուգընթաց ազգային գիտակցության մեջ հիմնավորվում է նաև վրեժխնդրության սինդրոմը, ապա համարյա անվերահսկելի է դառնում կոնֆլիկտի հետագա բորբոքումը: Ի դեպ, Ադրբեջանում ապրող յուրաքանչյուր ադրբեջանցու գիտակցության մեջ նույնացվում են "հայ" և "Ադրբեջանի ոխերիմ թշնամի" հասկացությունները: Դա բնականաբար տեղիք է տալիս ադրբեջանական կողմից պարբերաբար հնչեցվող ռազմատենչ հայտարարություններին: Որոշ քաղաքագետների մոտ հիմնավորվում է այն համոզմունքը, որ խաղաղ ելքով միջէթնիկական կոնֆլիկտի վերջնական լուծումը անհնարին է:[25] Մինչդեռ կա նաև հակադարձ կարծիքը, որի համաձայն յուրաքանչյուր հասարակության մեջ պատերազմական ուժերի հետ մեկտեղ կան նաև խաղաղության ձգտման ուժեր, որոնց օգնությամբ կարելի է խաղաղ ելքով կարգավորել նաև էթնոքաղաքական կոնֆլիկտները: Կոնֆլիկտի երկու կողմերի լիդերների և էլիտար խմբերի իրատեսական մոտեցումները կարող են նպաստել կարգավորման գործընթացի հաստատմանը: Կոնֆլիկտի ժամանակավոր սառեցման երկարաձգումը կարող է կողմերի մեջ աստիճանաբար մարել պատերազմը վերսկսելու սինդրոմը: Այդպիսի դեպքերում կողմերն սկսում են փնտրել փոխզիջումների վարկածներ, որոշակի պայմաններ են առաջադրում խաղաղ ելքով կարգավորելու համար:

Կողմերի իրատեսական ռազմավարությունն սկսվում է կոնֆլիկտի փոխակերպումից և անցում է կատարվում դեպի խաղաղության ուժերի, միջոցների, եղանակների հանդրումն ու համախմբումը: Գործընթացը կարող է ունենալ երկու հետևանքներ՝ հարաբերական և լավատեսական: Այստեղ հարաբերական ենք համարում խաղաղ կարգավորման այնպիսի պայմանների

[25] Տես՝ Г. И. Козырев, Политическая конфликтология, М., 2008г., стр. 341.

հաստատումը, որտեղ ստվերի տակ են թողնում ուժային միջոցները, սակայն նոր բախման համար շարունակում է գոյություն ունենալ վտանգը: Լավատեսական խաղաղ գործընթացը արտահայտում է շոշափելի ձեռքբերումը կոնֆլիկտի վերջնական կարգավորման համար: Լավատեսական արդյունքի ձեռքբերման գործում կարևորվում է կոնֆլիկտի երկու կողմերում ձևավորված ապրելակերպում, կենցաղում, ավանդույթներում ու սովորույթներում ընդհանուր, նմանատիպ արժեքների ու բարոյական նորմերի բացահայտումը: Խրախուսվում է գտնել կոնֆլիկտի կարգավորման այնպիսի ելք, որը միաժամանակ և՛ բխում է ընդհանուր սկզբունքներից, և՛ չի հակասում յուրաքանչյուր կողմի ազգային կյանքում արմատավորված առանձնահատկություններին: Բոլոր դեպքերում խաղաղարար գործընթացում ամենաէականը ուժի գործադրման կանխումն է:

Մարդկային բազմադարյա հարաբերությունների համակարգում ամենառողբալի հետևանքներով են բնութագրվում էթնոքաղաքական հակամարտությունները: Միայն վերջին երկու տասնամյակների ընթացքում այդպիսի հակամարտությունների զոհ են դարձել բազում մարդիկ: Որոշ երկրներում մարդկային զոհերի թիվը գերազանցել է մեկ միլիոնից: Այսպես, Թուրքիայում քրդերի և թուրքական կառավարական զորամասերի ընդհարումներում զոհվել է 26 հազար մարդ, Շրի-Լանկայում՝ ավելի քան 35 հազար մարդ, Ֆիլիպիններում ավելի քան 120 հազար մարդ, Լիբերիայում՝ 150 հազար մարդ, Բոսնիայում և Հերցեգովինայում՝ 200 հազար մարդ, Սուդանում՝ մեկ միլիոնից ավելի, Աֆղանստանում՝ 500 հազար, իսկ Ռուանդայում միայն 1994 թվականի 3 ամիսների ընթացքում զոհվել է մեկ միլիոնից ավելի մարդ:[26] Այս թվերը ինքնըստինքյան հուշում են այն կարծիքի իրավացիությունը, որի համաձայն էթնոքաղաքական հակամարտությունների կառավարման ու կարգավորման միակ ճիշտ ուղին խաղաղ գործընթացի ընտրությունն է:

[26] Տես՝ Ю. П. Шабаев, А. П. Садохин, Этнополитология. М., 2005г., стр. 107.

ՎԵՐՋԱԲԱՆ

Ժամանակակից աշխարհի պետություններում, ազգերի ու ժողովուրդների փոխադարձ հարաբերությունների բնութագրությունը անխզելիորեն կապված է գլոբալացման գործընթացի հետ: Այդ գործընթացի սոցիալական հետևանքներից կարելի է համարել նաև էթնոքաղաքական հակամարտությունների յայնածավալ ակտիվացումը: Քաղաքագետները տարբեր տեսանկյուններով են փորձում բացատրել գլոբալացման գործընթացի պայմաններում էթնոքաղաքական հակամարտությունների ակտիվացման պատճառական կապերը: Մի կարծիքի համաձայն այս տիպի հակամարտությունների հիմքում ժողովուրդների քաղաքակրթական զարգացման տարբեր աստիճանների առկայությունն է: Մեկ այլ կարծիքի համաձայն էթնոքաղաքական հակամարտությունների առաջացման որոշիչ պատճառը մշակույթների բախումն է: Մեկ այլ կարծիքի համաձայն պատճառական կապերը պմենից առաջ պետք է փնտրել ազգերի ու ժողովուրդների պատմականորեն ձևավորված ու կայացած հարաբերություններում: Հետևաբար, առայսօր չի ձևավորվել միանշանակ կարծիք ոչ՝ հակամարտությունների ծագման պատճառների, ոչ՝ էլ այդ հակամարտությունների լուծման եղանակների ու միջոցների մասին:

Մեր կարծիքով իրավացի են ներկա հիմնահարցով զբաղվող այն տեսաբանները, որոնց համոզմունքով բոլոր էթնիկական խմբերը ի վիճակի են կանխելու ծայրահեղ թշնամանքը ազգային հարաբերություններում, բացառելով հակամարտության ուժի օգնությամբ լուծելու հնարավորությունը: Դրա համար առաջին անհրաժեշտության խնդիր է դառնում հանդուրժողականության ցուցաբերումը հակամարտող կողմի լեզվի, մշակույթի, ավանդույթի և, վերջին հաշվով, նաև ինքնորոշման պահանջի հանդեպ, անգամ այնպիսի դեպքում, երբ մյուս կողմը համոզված է ներկայացվող պահանջի տենդենցիոզության մեջ: Խնդիրն այն է, որ ժամանակակից օբյեկտիվ զարգացման գործընթացում անկախ սուբյեկտների կամքից աննախընթաց զագացում է տեղի ունենում համամարդկային նոր արժեքների ստեղծման, տնտեսական, քաղաքական ու մշակութային

կյանքի ինտեգրատիվ հարաբերությունների հաստատման ասպարեզներում: Ուստի պատահական չէ այն փաստը, որ գնալով ավելի կարևորվում ու հատուկ նշանակություն է ստանում միջազգային կառույցների ակտիվ միջամտությունը էթնոքաղաքական հակամարտությունները խաղաղ ելքով կարգավորելու նպատակով: Անշուշտ, կոնֆլիկտի երկու կողմերում գտնվում են այնպիսի ուժեր, որոնք հաճախ անձնական, սուբյեկտիվ շահերից ելնելով փորձում են խոչընդոտել կոնֆլիկտի կարգավորմանը: Հետևաբար, կարևորվում է բոլոր լավատեսական և իրատեսական ուժերի միավորումը կոնֆլիկտը սառեցնելու և կարգավորման համար նոր մոտեցումներ փնտրելու գործում: Միջազգային պրակտիկայում միանշանակ հաստատվել է, որ սպառազինություններն ու պատերազմները ողբերգություններից բացի այլ հետևանքներ ունենալ չեն կարող: Հիմնահարցի դրական լուծման միակ ելքը ժողովուրդների միջև ծագող հակասությունների աստիճանաբար մարումն է և յուրաքանչյուր անհատի մոտ ազգային ինքնագիտակցության ձևավորման զուգընթաց այնպիսի գաղափարի մարմնավորումը, որը հաստատում է անկախ էթնիկական պատկանելիությունից բոլոր մարդկանց բնական իրավունքը՝ անվտանգ ապրելու համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Аклаев А. Р. Этнополитическая конфликтология. М., 2008г.
2. Анцупов А. Я., Шипилов А. И. Конфликтология. М., 1999г.
3. Арутюнян Ю. В. Трансформация постсоветских наций. М., 2003г.
4. Ачкасов В. А., Гуторова В. А. Политология. М., 2008г.
5. Василенко И. А. Политические переговоры. М., 2007г.
6. Гулиев М. А., Коротец И. Д., Чернобровкин И. П. Этно-конфликтология. Москва- Ростов на Дону. 2007г.
7. Дмитриев А. В. Этнический конфликт: теория и практика М.,1998г.
8. Зайцев А. К. Социальный конфликт. М., 2002г.
9. Здравомыслов А. Г. Межнациональные конфликты в постсоветском пространстве. М., 2005г.
10. Здравомыслов А. Г. Социология конфликтов. М., 2005г.
11. Козырьев Г. И. Политический конфликт: общее и особенное. М., 2007г.
12. Козлов В. И. Этнос, нация, национализм. М., 1999г.
13. Козырьев Г. И. Политическая конфликтология. М., 2008г.
14. Кравченко А. И. Политология. М., 2007г.
15. Г. Р. Латфуллин, Н. В. Новиков. Политическая организация. М.,2007г.
16. Малахов В. С., Тишков В. А. Мультикультурализм и трансформация постсоветских обществ. М., 2002г.
17. Мальцев В. А. Основы политологии. М., 1997г.
18. Манасян А. С. Карабахский конфликт. Ереван, 2005г.
19. Минасян Сергей. Нагорный Карабах после двух десятилетий конфликта. Ереван, 2010г.

20. Мнацаканян М. О. Нации и национализм. М., 2004г.
21. Садохин А. П. Этнология. М., 2000г.
22. Солдатова Г. У. Психология межэтнической напряженности. М., 1998г.
23. Соловьев Э. Я. Искусство проведения переговоров. М., 2006г.
24. Тишков В. А. Этнополитология. М., 2001г.
25. Тураев В. А. Этнополитология. М., 2004г.
26. Шабаев Ю. П., Садохин А. П. Этнополитология. М., 2005г.
27. Шейнов В. П. Управление конфликтоми. Минск, 2010г.
28. Эндрю Хейвуд. Политология. М., 2005г.
29. Ямсков А. Н. Этнический конфликт. М., 1997г.

Շահեն Միքայելի Աբրահամյան

Ալվարդ Գարեգինի Աբրահամյան

ԷԹՆՈՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

/ծագման պատճառները, ռազմավարությունը, կարգավորման ուղիները/

Հանձնված է շարվածքի՝ 14.10.2011թ.: Ստորագրված է տպագրության՝ 20.11.2011թ.: Ծավալը, 3.75 տպ. մամուլ: Տպաքանակ՝ 150:

ԱրՊՀ հրատարակչություն
Ստեփանակերտ 2011